№ 220 ՇԱԲԱԹ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1911

ՇԱԲԱԹ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 220

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ". Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Հոկտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 3 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։ Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, հոկտեմբերի 10-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
Առաջին անգամ Թիֆլիսի բեմի վրա
ՍԷՐ ԵՒ ՄԱՀ
Դրամա 4 արար. և առաջաբանով, Գորդինի, Թարգ. Զ. Զամբաղեանի
Մասնակցում են՝ տ. տ. Ադամեան, Զաբէլ, Ժասմին, Խանդանեան, Մայսուրեան, Ցասմիկ և Սիրանոյշ, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Ալիխանեան II, Աւետեան, Լաքա և Շահխաթունի։
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։ ✦ Տեղերի գները էժանացված են։
Ռեժիսոր՝ Յ. ԱԲԷԼԵԱՆ
(ա. օ.) առ. 982. 2—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Շաբաթ, հոկտեմբերի 8-ին, երեկոյեան ժամը 7-ին Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նշանակված է երկրորդ արտակարգ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ. Այդ ժողովում պէտք է ընտրվեն վարչութեան համար 2 անդամ, փոխ-անդամ, խմբագրական մասնաժողովի համար 6 անդամ, 3 փոխ-անդամ և վերստուգիչ յանձնաժողովի համար 2 փոխ-անդամ։
(շ.) առ. 964. 2—2

ՀՐԱՒԷՐ

Թեմիս կառավարիչ սրբազան Եփրեմ եպիսկոպոսի կարգադրութեան համաձայն հոկտեմբերի 9-ին, կիրակի, գլխի ս. պատարագի, ժամը 12-ին, տեղի կունենայ ծխ. I ժողով Թիֆլիսի հայոց հետեւեալ եկեղեցիներում, այն է՝ 1) Վանքի աւագ եկեղեցում, 2) Մուղնու ս. Գէորգ, 3) Ջգրաշէնի Աւետեաց ս. Աստուածածին, 4) Նորաշէնի ս. Աստուածածին, 5) Կաթուղիկէ ս. Աստուածածին, 6) Բեթղեհէմի ս. Աստուածածին, 7) Քամոյեան ս. Գէորգ, 8) Ջրկինանց ս. Կարապետ, 9) ս. Նշան, 10) ս. Սարգիս, 11) Քարափի ս. Գէորգ, 12) Հրեշտակապետաց, 13) Վերայի ս. Խաչ, 14) Թանդոյեան ս. Աստուածածին, 15) Կուկիայի Նորաշէնի ս. Աստուածածին, 16) ս. Կարապետ, 17) Զուգուբէթի ս. Աստուածածին, 18) Կարմիր Աւետարանի, 19) Էջմիածնեցոց ս. Գէորգ, 20) ս. Լուսաւորիչ, 21) Ջորաբաշի, 22) Նաւթլուղի ս. Գէորգ, 23) ս. Մինաս—իւրաքանչիւր եկեղեցում ընտրելու 3-ական պատուիրակ, որոնք յետոյ առաջնորդարանում ընտրելու են թեմական մի պատգամաւոր, որը մասնակցելու է Էջմիածնում կաթողիկոսական ընտրութեան։

Ուստի սրանով հրաւիրվում են վերոյիշեալ եկեղեցիների ծխականները, որ 25 տարեկան և աւելի հասակ ունեն, գնալ իրանց ծխական եկեղեցիները նշանակված օրը և ժամին մասնակցելու 3 պատուիրակի ընտրութեան։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների
Գործակալ ա. մասի՝ Սարգիս աւ. քահ. Տիօյեանց
Գործակալ բ. մասի՝ Ղեւոնդ քահ. Մամիկոնեանց
(շ.) առ. 974. 2—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Այսօր, շաբաթ, հոկտեմբերի 8-ին,
Հայոց Դր. Ընկ. Թատերասէրների խումբը
Մասնակցութեամբ դերասանների
կը ներկայացնէ
ՍԱՏԱՆԱՅ
Դրամա 4 գործ. նախաբանով
Մասնակցում են.—տ. տ. Արուսեակ, Դուրեան-Արմէնեան, Մանուչարեան, Մամիկոնեան, Սոֆիկ, օր. Մարգարիտ, պ. պ. Ամօ-Խարազեան, Արմէնեան, Գալստեան, Գաւրօշ, Հայկազեան, Յարութիւնեան և ուրիշները։
Պիէսայի բարդութեան պատճառով սկսվելու է ճիշդ ժ. 8-ին։
Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպ.։
Ռեժիսոր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Հերթ. կարգադրիչ՝ Մ. Ստամբոլցեան
983. 1—1

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Կ.Հ.Բ. ԸՆԿ. 30-ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
Գինն է 1 րուբլի։ Ճանապարհածախսը գնողի վրա։ Դիմել Ընկ. գրասենեակը՝ Абасъ-Абадская ул., д. с., № 7.
առ. (շ.) 980. 2—1

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԲԱՐՒՈՔՈՒՄԸ

Մի փոքր կանոնաւորութիւն, որ մտցված է վերջին տարիները Էջմիածնի տնտեսավարութեան մէջ, ցոյց է տալիս, որ նոյն իսկ ներկայ տեխնիկական պայմաններում կարելի է աւելացնել եկամուտները, եթէ միայն հսկող մարմինը մի որոշ աչալրջութեամբ է վարում տնտեսութիւնը։

Պարտքերը, որոնք ծանրացել էին Էջմիածնի վրա, վճարվում են եկամուտներից, և եթէ կանոնաւոր տնտեսավարութիւնը շարունակվի, շուտով Էջմիածինը կունենայ գումարներ նոր կարևոր ծախքեր կատարելու համար։

Իսկ, անկասկած, աւելի ևս մեծ կը լինեն արդիւնքները, եթէ աջողվի բարւոքումներ մտցնել հողի մշակութեան, հանքերի և անտառների շահագործութեան և առհասարակ կալուածքների կառավարութեան մէջ։

Էջմիածինը հէնց Վաղարշապատի շրջանում ունի հազարաւոր դեսետիններ, որոնք անմշակ են մնում ջրի պակասութեան շնորհիւ։ Վերջին տասնամեակում փորձեր եղան աւելացնելու ջրի քանակը և, արդարև, ջուր այժմ կայ աւելի մեծ չափով, քան առաջ. բայց նա աւելի մեծ կը լինի՝ եթէ ջուր կը վերցվի Սև-ջուր գետակից և գործի կը դրվեն Զանգուից և Սևանայ լճից յատկացված և յատկացվող նոր ջրերը։ Որքան մեզ յայտնի է, Էջմիածինը շուտով կը ստանայ իրաւունք վերցնելու Սևանայ լճից 50 բաշ ջուր, որով կաւելանայ նրա ջրի պաշարը։ Եթէ աչքի առաջ ունենանք, որ Վաղարշապատն էլ կը ստանայ 30, իսկ Զօրանքեարան 20 բաշ ջուր, մենք կը տեսնենք, որ Էջմիածնի շրջակայքը նոր աջակցութիւն է ձեռք բերում իր տնտեսութեան բեղմնաւորութեան համար։

Էջմիածնական միւս կալուածքներում շարունակվում է նախկին դրութիւնը, որը սակայն կարելի է բարւոքել և լաւ արդիւնքներ ստանալ։ Այս ամառվայ ընթացքում Մեսրոպ եպիսկոպոսը փորձեց շրջագայելու Էջմիածնապատկան կալուածները, մանաւանդ Գանձակի նահանգում։ Այս շրջագայութիւնը ցոյց տուեց, որ շատ տեղերում հնարաւոր է կալուածական տնտեսութեան բարւոքումը և որ եթէ Էջմիածնի սիստեմական հաստատ գործունէութեամբ առաջ տարվի բարւոքման մի մեծ ծրագիր, մի քանի տարիներից յետոյ Էջմիածնի եկամուտը զգալի չափով կը բարձրանայ և կարողութիւն կը տայ իրագործելու կրթական և բարեկարգչական ասպարէզներին վերաբերեալ մի շարք կարևոր ձեռնարկներ։

Մինչև այժմ չափազանց դանդաղ է գնացել բարւոքումների գործը։ Մշակված ծրագիրները մնալով անիրագործված վիճակի մէջ՝ մասամբ պիտանի են և այժմ, բայց մասամբ կարօտ են վերաքննութեան և վերամշակութեան։ Էջմիածինը պէտք է ունենայ ձեռնհաս մասնագիտական ոյժեր իր տրամադրութեան տակ կազմակերպելու իր տնտեսավարութիւնը խելացի և հաստատուն հիմքերի վրա։

Տասնեակ տարիներ խօսվում է բարեկարգութեան և բարւոքումների անհրաժեշտութեան մասին։

Թող Էջմիածնի ներկայ գործողները, որոնք զգում են բարեփոխութիւնների պահանջը, դնեն սկիզբը կուլտուրական գործունէութեան։

Մենք հաւատացած ենք, որ Էջմիածինը մեր հասարակութեան շրջաններում կը գտնի անձեր, որոնք կարող կը լինեն իրանց օգտակար և նպատակայարմար ցուցմունքներով նպաստել կուլտուրական բարեկարգութեան ծրագիրների իրականացման մեր կեանքի մէջ։

Ա. Քալանթար

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)
6 հոկտեմբերի

Կ. Պոլիս.—Վեզիրի ճառի պաշտօնական բնագիրը բաժանվեց երկրորդ անգամ ուղղված ու լրացված. «Զանազան համայնքների կրօնական արտօնութիւնների նկատմամբ օրէնքների ու ֆերմանների պահպանումը և պետութեան բոլոր տարրերի մէջև հայրենասիրական կապ հաստատելը կառավարութեան հոգատարութեան առանձին առարկան է լինելու»։

Ընդփակ նիստում վեզիրը յայտնեց, որ Տրիպոլիսի հարցը բացառապէս իտալական հարց չէ. այդ հարցը ընդհանուր քաղաքականութեան հարց է։ Խոստացաւ այն լուծել ի շահ Թիւրքիայի։ Սակայն այն հարցին՝ թէ խոստանում է նա, արդեօք, պահել Տրիպոլիսը Թիւրքիայի համար, վեզիրը հրաժարվեց խոստանալ։ Պատգամաւորների խնդրքին՝ հաղորդել մեծ պետութիւնների հետ ունեցած բանակցութիւնների մանրամասնութիւնները՝ վեզիրը պատասխանեց, որ այդ դէպքում վախճանի բովանդակ պատասխանատուութիւնը իր վրա է վերցնելու պալատը։ Վերջում վեզիրը խնդրում է պալատին անյապաղ լուծել կաբինէտին վստահութիւն յայտնելու խնդիրը։

Իտալական նաւատորմը գտնվում է Ռոդոսի մօտերը։ Դէրնան գրաւելու ջանքերը դիմադրութեան են հանդիպում։

«Խիկմէտ» լրագրի հրատարակիչը աքսորվեց Կաստամունի։

Պալատի կոմիտէտական անդամների նիստում վճռվեց պաշտպանել Սայիդ փաշային։ Կաբինէտի մնացած անդամների վիճակը առայժմ վճռված չէ, որովհետև մտադրութիւն կայ միութիւն կազմել օպպօզիցիայի հետ կաբինէտի հարցի առիթով։

Պալատում եօթ կոմիտէտի անդամներից և եօթ օպպօզիցիոնիստներից բաղկացած խառն մասնաժողովի նիստում վճռվեց կաբինէտ կազմել Սայիդ փաշայի գլխաւորութեամբ, իրաւունք տալով նրան ընտրել կաբինէտի մնացած անդամներին, պայմանով, որ Հակկը փաշայի կաբինէտի անդամներից ոչ մէկը չընդունվի։ Համաձայնութիւնը սպասվում է Սայիդ փաշայից։

Բերլին.—«Լոկալ-Անց.»-ին հաղորդում են Հռոմից, որ Իտալիան 14 օրվայ մէջ պաշտօնապէս յայտարարելու է Տրիպոլիսը և Կիրենաիկին իւրացնելու մասին։

Բէտման-Հօլվէգը երկար խորհրդակցեց իտալական դեսպանի հետ։

Տրիպօլիս (Յատուկ թղթակցից).—Պաշտօնապէս հաղորդվում է, որ պատերազմական նաւերը հոկտեմ. 3-ին ռմբակոծեցին Դէրնան՝ զօրքերին ափ իջեցնելու համար, սակայն զօրքերի ափ իջնելուն արգելք եղաւ վատ եղանակը։

Լազօր.—Որովհետև Գերմանիան պաշտպանում է Իտալիային, տեղացիները յորդորում են մահմեդական ազգաբնակութեան բօյկօտ յայտարարել գերմանական և իտալական ապրանքների դէմ։

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
6 հոկտեմբերի

Մուկդէն.—Մուկդէն-Պեկինի երկաթուղին սկսեց երթեւեկել։

«Դաչժուն-Գունբաօ» լրագիրը փակվեց յեղափոխական շարժման մասին տեղեկութիւններ տպելու համար։

Մի խումբ ինտելիգենտ անձինք միջնորդում են անյապաղ գումարել պարլամենտը յեղափոխութեան յետագայ առաջխաղացումը կանգնեցնելու համար։

Զժաէրսինը պատուիրագրեց հրատարակել, որ ապստամբութիւնը չէզոքացված է։

Ուչան.—Խանիանէում և Խունան, Ցզեանսի, Գուանդունի նահանգներում ամեն ինչ հանգիստ է։

Պեկին.—Հրովարտակով դատապարտվում են ապստամբների գործողութիւնները, յորդորվում է խաղաղ ազգաբնակութեանը հաւատարիմ մնալ գահին, խոստացվում է ներումն զղջացող ապստամբներին։ Ապստամբութեան դէմ կռուելու աջակցութեան համար խոստացված են առատ պարգևներ։ Ուրիշ հրովարտակով բոլոր ցամաքային ու ծովային ոյժերը Եանտըկեանգի շրջանում ժամանակաւորապէս հպատակվում են Ինանշիկային, որ գործում է հարեան փոխարքաների հետ միասին։

Մուկդէն.—Բոլոր զօրքերը գտնվում են ռազմական դրութեան մէջ։ Առաջին զօրաբանակը ամբողջովին ուղարկվում է Պեկին։ Նոր զօրամասեր են կազմվում մանջուրացիներից։

Կուանչենձի.—Յեղափոխութիւնը Չինաստանում իրարանցում առաջ բերեց չինական բօրսայում։ Կառավարական և մասնաւոր բանկերի արժեթղթերը ընկնում են ամեն 2—3 ժամը մէկ անգամ։ Ազգաբնակութեան տրամադրութիւնը յուզված է։ Ոստիկանութիւնը պոկեց ապստամբութեան կոչող ցուցանակները։

Եապօնական աղբիւրներից հաղորդում են, որ խունխուզները Մանջուրիայում յեղափոխականների համաձայնութեամբ մտադիր են ապստամբութիւն պատրաստել Մանջուրիայում։

Լոնդօն.—«Մօրնինգ-Պօստին» հեռագրում են Վաշինգտոնից, որ հոկտեմբերի 18-ին Նիւ-Եօրկում նշանակված է Միացեալ-Պետութիւնների ծովային ոյժերի փորձնական զօրաժողով փոխ-ծովակալ Օստէրհաուզի հրամանատարութեամբ և 102 նաւերի մասնակցութեամբ։ Միաժամանակ Լօս-Անջէլօսում զէնքի է կանչվելու Խաղաղ-Ովկիանոսի նաւատորմը։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն զինակոչը կատարվում է նաւատորմի ռազմական պատրաստութիւնը ստուգելու համար։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
6 հոկտեմբերի

Պարիզ.—Ծովային նախահաշւի քննութեան ժամանակ բիւջէտային մասնաժողովի մէջ զեկուցանող Պենլէվը յայտնեց, որ «Լիբերտէ»-ի հետ պատահած դժբաղդութիւնը ինքն իրան բխված վառօդից եղաւ։

Բելգրադ.—Սկուպշչինա։ Երիտասարդ արմատական Դրաշկօվիչը յայտնեց, որ, չը նայած երիտասարդ արմատականների դժգոհութեան ընդդէմ հին արմատականների կառավարութեան, նրանք Բալկանների լուրջ դրութիւնը աչքի առաջ ունենալով կը պաշտպանեն նրան։

Սկուպշչինան վճռեց նիստը յետաձգել, մինչև նոյեմբերի 10-ը, երբ ֆինանսական մասնաժողովը կաւարտէ եկող տարվայ բիւջէի քննութիւնը։

Պարիզ.—Կամբօնը և Կիդերլէն-Վէխտէրը հոկտ. 5-ին նորից խորհրդակցեցին։ Բանակցութիւնների հետևանքը ըստ երևոյթին նպաստաւոր է։

Ստոկհօլմ.—Նօբէլեան բժշկական մրցանակը տրվեց Ուպսալի համալսարանի պրոֆեսոր Գուլստրանդին աչքի նշանառութեան գործիքի վերաբերմամբ աշխատելու համար։

Բուդապեշտ.—Մամուլը, քննելով Հիւսիսային Իտալիայում ձեռնարկված զօրաժողովը, մատնանշում է, թէ Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի յարաբերութիւնները սուր կերպարանք են ստացել։

Սէնտ-Էտիէն.—Քարածխային հանքերում պայթումից զոհվեցին 26 բանուոր։

Լիսաբօն.—Քաղաքական գործերի վերաբերմամբ դատավարութեան կարգի օրինագծի քննութեան ժամանակ պալատը 59 ձայնով ընդդէմ 53-ի մերժեց օպպօզիցիայի առաջարկութիւնը—յանձնել այդ տեսակ գործերը ընդհանուր դատարաններին, և որոշեց քաղաքական յանցանքների գործերը յանձնել առանձին դատարանի։

Վիգօ.—Լուրերի համաձայն, պորտուգալական միապետականները հոկտ. 4-ին գրաւել են Մօնտալեգրէն հանրապետական հեծելազօրի հետ կռուելուց յետոյ։ Վերջինս կորցրել է 16 վիրաւոր. շատերը գերի են ընկել։ Առաջինների կորուստներն աննշան են։

Ստոկհօլմ.—Առաջին պալատը արձակվեց։ Նշանակված են նոր ընտրութիւններ։

Կանէա.—Ազգային ժողովը դարձեալ չը կայացաւ։ Մինիստրական պատգամաւորները սպառնալիք ուղարկեցին օպպօզիցիային, որ եթէ նա դարձեալ կը խուսափէ աշխատելուց, այն ժամանակ ազգային ժողովը կարձակվի և մինիստրական կուսակցութիւնը իր ձեռքը կառնէ երկրի կառավարութիւնը։

Պետ. Հեռ. Գործ. թղթակիցը տեղեկացաւ, թէ մեծ պետութիւնների նոտային ցաւում է պատասխանվում, որ ցայսօր Կրետէ կղզին մնում է չը միացած Յունաստանի հետ։

ՆՈՐ ՀԱՇՏԱՐԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Հեռագիրը լուր բերեց, որ անգլիական առևտրի դէպարտամենտում հիմնվել է մի նոր խորհուրդ, որի նպատակն է ընդհարումների առաջն առնել ձեռնարկողների և բանուորների միջև։ Այդ հիմնարկութեան կապը՝ անցեալ տարվայ անգլիական գործադուլների հետ, որոնք չափազանց վախեցրին անգլիական հասարակական կարծիքը, կատարելապէս ակներև է, որը և շեշտվում է բոլոր լրագիրների կողմից։ Խորհրդի նախագահ է նշանակված Ասկիթ, մի մարդ, որը ընդհանուր յարգանք է գրաւել իր գործունէութեամբ որպէս միջնորդ՝ բանուորների և ձեռնարկողների միջև։ Խորհրդի անդամներ նշանակված են կառավարութեան կողմից։

Ձեռնարկողների կողմից մտնում են այդ խորհրդի մէջ արդիւնագործութեան խոշորագոյն ճիւղերի ձեռնարկողների դաշնակցութիւնների պաշտօնական պարագլուխները։ Այդ խորհրդին հրաւիրված են մասնակցելու պողպատագործական և երկաթագործական գործատների, ածխագործական, բամբակագործական գործատների, տպարանների նախագահները և այլն։ Բանուորների կողմից խորհրդին մասնակցում են ածխագործների, փոխադրող նաւերի, երկաթուղային բանուորների քարտուղարները և նախագահները և այլն։ Մի խօսքով, կառավարութիւնը ամեն ինչ արեց, ինչ որ կարող էր խորհրդի վճիռներին հնարաւոր մեծ հեղինակութիւն տալու համար։

Այդ վճիռները ամենևին ստիպողական բնաւորութիւն չեն ունենալու. դեռ այդ ոչինչ, ինքը դիմումը խորհրդի միջամտութեան՝ ոչ ոքի համար պարտաւորական չէ։ Կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարում է, որ նա ամենևին չէ ցանկանում բռնի կերպով միջամտել սկսված կոնֆլիկտներին. Նրա միակ նպատակն է աջակցել կամաւոր համաձայնութեան ապագայ զարգացման այն մէթօդներին, որոնք գործադրվում են այս րոպէիս և որոնք հնարաւորութիւն են տալիս գործադուլների առաջն առնել և հաշտեցնել գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները

«Daily News»-ն այն համոզմունքն է յայտնում, որ խորհուրդը մի նոր և աւելի երջանիկ էջ կը բանայ դրամագլխի և աշխատանքի յարաբերութիւնների պատմութեան մէջև Անգլիայում և իրական միջոց կը դառնայ խաղաղութիւնը ապահովելու համար։

«Times»-ը այնքան էլ լաւատես չէ։ Ընդհանրապէս գովելով կառավարութեան վճիռը, «Times» լրագիրը մատնացոյց է անում այն բանի վրա, որ պաշտօնական նշանակումն ստացող բանւորները անխուսափելի կերպով կը կորցնեն իրանց հեղինակութիւնը բանւորական մասսաների մէջ։ Նրանց մասնակցութիւնը խորհրդին դրամատէրերի ներկայացուցիչների հետ միասին՝ ինքնըստինքեան ընդունակ է յետ մղել նրանցից արմատական տարրերը բանւորների շրջանում։ Նոյնպէս կը վատթարացնէ նրանց դրութիւնը մերձաւոր և մշտական շփումը կառավարչական շրջանների հետ։ Վերջ ի վերջոյ «Times»-ը այնուամենայնիւ յայտնում է, որ արժէ այդ փորձն անել։ («Р. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կաթ. պատուիրակների ընտրութիւն

Քանաքեռ, 3 հոկտեմբերի

Ամսիս 2-ին տեղիս «Աբովեան» ծխ. դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ կաթ. ընտրութիւնների առիթով Կոտայից շրջանի ծխ. ներկայացուցիչների ժողովը։ Այս ժողովը պիտի ընտրէր երկու պատուիրակ, որոնք գնալով Երևան՝ ամսիս 30-ին պատուիրակների ընդհ. ժողովում պիտի ընտրէին մի պատգամաւոր ամբողջ Երևանի թեմի կողմից։

Գործակալ քահանան ըստ կանոնադրութեան բանալով ժողովը՝ բացատրեց ժողովի նշանակութիւնն ու նպատակը և առաջարկեց ընտրել ժողովը կառավարելու և նրա որոշումները արձանագրելու համար նախագահ և քարտուղար։

Նախագահ ընտրվեց Թ. Ղազարեանը, որը բացատրեց ժողովականներին ժողովի և նրա կայացրած որոշումները, աւելացնելով՝ որ Կոտայից շրջանը, որը համեմատած միւս հայկական ընտրական շրջանների հետ ամենաբազմամարդն է, պէտք է գիտակցօրէն և վերին աստիճանի անաչառօրէն վերաբերվի դէպի ներկայ ընտրութիւնը և իր պատուիրակների միջոցով իր ձայնը լսեցնէ պատուիրակների ժողովում կաթողիկոսական թեկնածուի վերաբերմամբ։

Այնուհետև դրվեցին Սուրէնեան, Օրմանեան, Մեսրոպ, Կարապետ, Խորէն Մուրադբէգեան և Դուրեան եպիսկոպոսների անունները իրանց կենսագրականներով և գործունէութեան մանրամասներով։ Ժողովը որոշեց համարել Խորէն եպ. Մուրադբէգեանին կաթողիկոսական առաջին ընտրելի, իսկ երկրորդ թեկնածուի վերաբերմամբ որոշվեց յանձնարարել մեր պատուիրակներին ձայն տալ պատուիրակների ժողովում որպէս կաթողիկոսական երկրորդ թեկնածուի նրան, որին պատուիրակների ժողովի մեծամասնութիւնը իր վստահութեան քուէն կը տայ։

Այնուհետև պատուիրակներ ընտրվեցին գիւղատնտես Թ. Ղազարեան և ուսուցիչ Թ. Տէր-Յովհաննիսեան։

Mucius

Հողերի գնի բարձրացումը

Գրիգորիօպոլ (Խերսոն. նահ.), 30 սեպ.

Արտասովոր կենդանութիւն է տիրում, ամսիս 27-ից ի վեր, մշտապէս հանդարտ մեր քաղաքում։ Ամեն ազգի երկսեռ բազմութիւն է խռնվում քաղաքային վարչութեան մէջ։ Մօտ 10,000 դեսեատին քաղաքապատկան վարելահողերը աճուրդի են հանված։ Այս վարելահողերը, որոնց դեսեատինը անցեալ տարիներում գնահատվել է 3—4 րուբլի՝ այժմ գնում է 15—18 րուբլով։ Օրէ-ցօր գները բարձրանում են։ Ապրուստի թանգութեան նախօրեակումն ենք։ Առաջները քաղաքը ինքն է գնահատելիս եղել և կապալով տուել, բայց այժմ աճուրդի է հանում և վեց տարով կապալով տալիս։ Մէկ տարվայ կապալավարձի կէսը սկզբից է պահանջվում, միւս կէսը յունվարի 15-ին, իսկ երկրորդ տարվանը՝ 1912 թ. սեպտեմբերին։ Շատերի քթից են մուխ հանում այս պայմաններն ու բարձրացրած գները, բայց կարծեմ ամենից շատ հայերի քթերն ու սրտերն են մխում, որովհետև այդ հողերը այն 33,400 դեսեատին վարելահողերից են, որ սրանից 112 տարի առաջ ռուսաց Պաւել I կայսրը բարձրագոյն հրովարտակով պարգևել էր Գրիգորիօպոլի հայերին՝ յաւիտեան ձրիաբար մշակելու համար, բայց սրանց անշնորհքութեան պատճառով անցել են քաղաքի և օտար ազգաբնակութիւնների ձեռքը։ Մոլդավանները, հայերի այդ նախկին նօքարները, այժմ հողատէրեր են դարձել, իսկ գերմանացիները հօ այնպէս են տիրել հայապատկան հողերին և այնպէս են օգտվում, որ եթէ հայի բազմադարեան կուլտուրան ու ջանասիրութիւնը ի ցոյց հանես էլ՝ գերմանացու трубка-ի ծխի հետ էլ չէ կարող մրցել։ Ad ugusta per angusta.

Խաչ. Տէր-Ենօքեան

Ցորենի արտահանում Նովօրօսսիյսկում

Նովօրօսսիյսկ, 29 սեպտեմբերի

Տեղիս հայ բանւորութիւնը համարեա թէ բոլորն էլ Նոր-Բայազէտի գաւառից են (գէօքչեցիք), աշխատում են ցորենի շտեմարաններում։ Առաջին տարին է, որ տեղիս նաւահանգստից պէտք է արտահանեն արտասահման (Յունաստան) արևածաղիկ։ Ամեն օր մեծ քանակութեամբ արևածաղիկ է մտնում տեղիս կայարանը, նշանաւորապէս Կուբանեան շրջանից։ Ցորենի արտահանութիւնը անցեալ տարվանից աւելի սակաւ է և շատ քիչ քանակութիւն է ստացվում տեղս և մինչև այժմ դեռ միայն երեք նաւ է բարձված։

Համօ

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 37-Դ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Սեպտ. 24-ին, ս. Գէորգի տօնը լինելով, առաւօտեան, պատարագից առաջ, Էջմիածնի միաբանութիւնը, գլուխ ունենալով Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցին, ներկայացաւ կաթ. տեղապահին և շնորհաւորեց տօնը։ Ներկայացան նաև Վաղարշապատի քահանաները, ճեմարանի ուսուցչական խումբը, սինօդի ծառայողները և վաղարշապատցիներից։ Պատարագիչը լուսարարապետ Ղևոնդ եպիսկոպոսն էր։ Պատարագից յետոյ բոլոր միաբանութիւնը խաչով, խաչվառով և կերոններով՝ շրջապատեց երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսի գերեզմանը և խուռն երկսեռ բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարեց։

Էջմիածնի Գէորգեան հոգևոր ճեմարանի 37-րդ տարեդարձը լինելով՝ հոգեհանգստից յետոյ բոլոր երկսեռ հասարակութիւնը խռնվեց ճեմարանի բակը, որտեղ հիւսիսային կողմում պատրաստված էին աթոռներ և նստարաններ թէ միաբանութեան և թէ ժողովրդի համար։ Սիւների ճակատին կախված էր երջանկայիշատակ Գէորգ Դ.-ի պատկերը, որի չորս կողմը աշակերտները բնական ծաղիկներից պսակներ և շղթաներ էին կախել ու ծաղիկների մէջ առել նկարը։

Տեղապահը կէս ժամ հանգստանալուց յետոյ միաբանութեան հետ գնաց տիկին Վարվառէ Քանանեանի նուիրատուութեամբ կառուցվելիք մանկավարժական թանգարանի հիմքի օրհնութիւնը կատարելու, որին հետևեց և երկսեռ բազմութիւնը։ Առաջին քարը տեղապահը դրեց, իսկ երկրորդը՝ Մեսրոպ եպիսկոպոսը։ Հիմքի օրհնութիւնը վերջացնելուց յետոյ, թէ միաբանութիւնը և թէ երկսեռ բազմութիւնը գրաւեցին ճեմարանի հիւսիսային կողմում իրանց համար պատրաստված տեղերը։ Թէ Քանանեանց թանգարանի հիմքի օրհնութեան և թէ Գէորգեան ճեմարանի հանդիսին ներկայ էր կաթողիկոսական թեմիս փոխանորդ Խորէն եպիսկոպոս Մուրադբէգեանցը։

Ճեմարանի հանդէսը սկսվելուց՝ նախ դպիրները երգեցին օրվայ շարականը և ապա ճեմարանի տեսուչ Բագրատ վ. Վարդազարեանցը բարձրացաւ ամբիոն և սկսեց 1910/11 ուսումնական տարվայ տեղեկագիր-հաշիւը կարդալ։

Նրա տուած տեղեկագրից երևաց, որ ճեմարանը ունեցել է 196 աշակերտ, որոնք եկել են հետևեալ թեմերից՝ Երևանի թեմից 94 հոգի, Վրաստանի և Իմերէթի թեմից 29 հ., Արցախի թեմից 8 հ., Շամախու թեմ. 4 հ., Աստրախանի թեմ. 6 հ., Թիւրքիայից 35 հ., Պարսկաստանից 15 հոգի։

Մուտք եղել է մօտաւորապէս 66,000 ր. և ելքը նոյնքան։ Տեղեկագրից երևաց, թէ զանազան մարդիկ նուիրաբերութիւններ են արել այսպէս՝

ա) Տիկին Քանանեանցը նուիրել է 30,000 ր., երբ ճեմարանի տեսուչ հ. Բագրատը յունվարին եղել է Մոսկվայում. Քանանեան մանկավարժական թանգարանը լինելու է մի վարժոց, որտեղ — դպրոցական ամենայն տեսակ իրերի նմուշներ, կրթութեան վերաբերեալ զանազան ժողովածուներ, մանկավարժական գրադարան և փորձնական մանկավարժութեան և պարբերական մանկավարժական դասախօսութիւններ ճեմարանի լսարանների և ծխական դպրոցի ուսուցիչների համար։

բ) Արմաւիրցի Ալէքսանդր և Միքայէլ Թօրոսեանները նուիրել են 40,000 րուբլի, որով պէտք է շինվեն ֆիզիկական, քիմիական և միւս բնական գիտութիւնների կաբինէտներ, նկարչութեան և կաղապարման սենեակներ։ Այս նոր շէնքի մէջ պիտի տեղաւորվի և ճեմարանի մատենադարան-գրադարանը։

գ) Սարգիս Ջանումեանը կտակել է 80 հազար րուբլի, որպէսզի դրա %-ով իր անունով ճեմարանում որդեգիրներ պահվեն։

Նա ասաց, որ դեկտեմբերի 11-ի ժողովում հարց դրվեց և որոշվեց ստեղծել մի դրամագլուխ յանուն Մատթէոս Բ. կաթողիկոսի՝ պարբերական հրատարակութիւնների համար, որի ղեկավարը լինելու է ճեմարանի մանկավարժական խորհուրդը։ Իսկ փետրվարի 23-ի ժողովում որոշվել է հրատարակել հայագիտական հանդէս կամ ժողովածու բառիս լայն իմաստով, որի մէջ մտնում են Հայաստանի և հայ կեանքի հետ կապ ունեցող բոլոր գիտութիւնները (Պատմութիւն, աշխարհագրութիւն, բնախօսութիւն, գրականութիւն, ազգագրութիւն, ճարտարապետութիւն, երկրաբանութիւն և այլն)։ 1911 թ. յունիսի 3-ի ժողովում որոշվեց կոչել այդ ֆօնդը Մատթէոս Բ. կաթողիկոսի անունով. մինչև այժմ ժողոված է այս առիթով 4495 ր. և շարունակվում է։

Երևաց նաև, որ ճեմարանի մանկավարժական ժողովը ունեցել է 59 նիստ (դըպրոցական մասին 37, մասնագիտականին 22)։ Զբաղմունքի նիւթեր եղել են՝ 1) նուէրի ընդունելութիւնը, 2) վերաքննվողների հարցը, 3) Թոշակաւորների և ձրիավարժների, 4) կարգապահութեան խնդիրներ, 5) բարերարների անուան սաներ ընտրելու հարցը, 6) դպրոցական և լսարանական ծրագիրների մշակութիւնը, 7) աշակերտների եռամսեայ առաջադիմութիւնը, 8) վեհափառ Իզմիրլեանի անուան ֆօնդը, 9) Աւետիս Ղուկասեանի անուան սաների խնդիրը, 10) տիկին Վարվառէ Քանանեանի և Տարասեանների նուիրատուութիւններով շինվելիք շէնքերի մասին, 11) գիւղատնտեսական զբաղմունքների մասին և 12) աշակերտական քննական տարեկան առաջադիմութեան և լսարանական բաժնի զանազան խնդիրներ և այլն։

Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդը որոշել է մեր միջնակարգ դպրոցներին տալ տարեկան 1,500 րուբլի գիւղատնտեսական զբաղմունքների համար։

Այդ հիման վրա ճեմարանը արդէն հրաւիրել է գիւղատնտես, որը դասախօսելու է ընդհանրապէս գիւղատնտեսական գիտելիքների մասին և ունենալու է գիւղատնտեսական գործնական զբաղմունքներ ճեմարանի հողերի վրա աշակերտների համար։

Ցանկալի է և յուսալի, որ Պետերբուրգի Խորհուրդը, ի նկատի ունենալով ճեմարանի յարմարութիւնները այդ տեսակէտից, իր նպաստը մեծացնի, որ հնարաւոր լինի գործը աւելի հաստատ հիմքերի վրա դնել, քանի որ դա մեր կեանքի հրամայողական խնդիրներից մէկն է։ Նա շեշտեց և այս, որ մեր Գ. դասարանը մտնողները, որոնց մեծ մասը մեր երկդասեան դպրոցներ աւարտողներն են, երբ գալիս են ճեմարան, դժբաղդաբար, շատ թոյլ են լինում։ Շատ քչերին է աջողվում քննութիւն տալ և առանց գիջումների մտնել ճեմարան։ Բնական է, որ թոյլ մտնելով չեն կարող ամբողջ ծրագիրը անցնել կանոնաւոր. յաճախ էլ գիջումներով դասարանից դասարան փոխադրվելով՝ մեծամասնութիւնը աւարտում է Զ. դասարանը ոչ այն մտաւոր պաշարով, զարգացողութիւնով ու պատրաստութիւնով, ինչ որ պահանջվում է ընդհանրապէս միջնակարգ կրթութիւն ունեցողներից։ Հէնց գլխաւոր պատճառներից մէկն էլ այս է եղել, որ յաճախ մանկավարժական ժողովներում արծարծվել է մի դասարան աւելացնելու հարցը։ Նպատակայարմար և օգտակար միջոցը այն կը լինի, որ Ա. և Բ. դասարանները վերաբացվեն, սակայն այն ծրագրով, որ մեր երկդասեան դպրոցներ աւարտող աշակերտները մտնեն ճեմարանի դպրոցական Ա. դասարանը։ Այսպիսի ծրագրային կազմութիւնով դպրոցական բաժինն աւարտելուց յետոյ կարող են աւելի լաւ պատրաստված մտնել Ա. լսարան կամ դուրս գալ գործելու ասպարէզում։ Նրա համեմատ էլ կը լինի բարձրագոյն բաժնի լսարանական մասի վերակազմութեան խնդիրը, որը նոյնպէս անցեալ տարվայ մանկավարժական ժողովների նիւթն է եղել։ Ապա քառաձայն խումբը, որը պատրաստել էր Ռ. աբեղայ Մանասեանը, երգեց «Ով հայոց Աստուած» երգը։

Երգից յետոյ նորեկ ուսուցիչ Ռ. Աբրահամեանը ամբիոն բարձրանալով ասաց մօտաւորապէս հետևեալը. «Սովորութեան համաձայն՝ Գէորգեան տօնի հանդէսին պէտք է անպատճառ նորեկ ուսուցիչներից մէկը խօսի, և ես այդ նմանեցնում եմ դօցենտի հրապարակական դասախօսութեանը բարձրագոյն դպրոցներում։ Ճեմարանի կոչումը պէտք է լինի ճեմարանի հայագիտութիւնը։ Ճեմարանի իսկական կոչումն է—լինելով ինքը հայագիտական բարձրագոյն դպրոց — պատրաստել հայագէտներ, տալ միջնակարգ դըպրոցներին ուսուցիչներ, հասարակական գործիչներ և ուսեալ կրօնաւորներ, որոնք պէտք է քաջ տեղեակ լինեն հայկաբանութեան, որպէսզի կարողանան մեր միջնակարգ դպրոցներում լաւ մանկավարժներ լինել։ Բայց պէտք է ասել, որ ճեմարանը անկարող է լինում այդ յոյսերն արդարացնել»։ Ճառախօսի ցանկութիւնն էր և նրա բոլոր խօսքերը պտտվում էին այդ նպատակի շուրջը։ Ռ. Աբրահամեանից յետոյ խումբը քառաձայն երգեց «Առաւօտեան թռչնոց երգեր» երգը։ Ապա ճեմարանի Ա. լսարանի ուսանող Ս. Քոչարեանցը խօսեց կրթութեան մասին։ Ապա մի փոքրիկ աշակերտ արտասանեց «Ես անուս եմ, ուսում տուէք, պարոններ» ոտանաւորը։ Յետոյ երգեցիկ խումբը երգեց «Մեր հայրենիքը» քառաձայն։ Թէ հանդէսը և թէ երգեցողութիւնը լաւ տպաւորութիւն թողին հանդիսականների վրա. հանդէսը փակվեց տեղապահի պահպանիչով։ Երեկոյեան ճեմարանի բակում մի փոքրիկ լուսավառութիւն կար։ Էլեկտրական գունաւոր լապտերները, լուսնի գեղեցիկ լոյսը և բնութեան գեղեցիկ եղանակը գրաւել էր երկսեռ հասարակութեանը ճեմարանի բակը, որտեղ տեղի ունեցան գեղջկական մի քանի երկսեռ կոլոր պարեր և երգվեցին քառաձայն մի քանի երգեր։

Վահան Ք. Աղազադեան

ԿԱԹՈՂ. ՊԱՏՈՒԻՐԱԿԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Դեկտեմբերի 11-ին, հանգուցեալ Իզմիրլեան կաթողիկոսի մահվան օրը, Էջմիածնում պէտք է գումարվի համազգային ժողով՝ նոր կաթողիկոս ընտրելու։ Այս առիթով արդէն մեր թեմերի զանազան անկիւններում տեղի են ունենում պատուիրակային ընտրութիւններ։

Ուրեմն, մենք կանգնած ենք մի նուիրական ու սուրբ պարտաւորութիւն կատարելու նախօրեակին, մանաւանդ եթէ յիշենք, որ մեր եկեղեցին ձեռք է բերված բիւրաւոր նահատակների արիւնով և օծված է Յիսուսի առաքեալներ՝ Թադէոսի և Բարթուղիմէոսի յաջորդութեամբ։

Եթէ ընդունում ենք, որ եկեղեցին էլ, իբրև որոշ հիմնարկութիւն, որոշ ինստիտուտ, կատարել ու կատարում է որոշ ֆունկցիաներ՝ հասարակութեան օգտին, եթէ ընդունում ենք, որ եկեղեցին էլ ունի իր բարոյական մասը հանուր քաղաքակրթութեան մէջ և պէտք է առաջ գնայ ժամանակի պահանջների համեմատ, դրանից եզրակացվում է միայն այն, որ մեզանից իւրաքանչիւրի վրա պարտք է դրըվում պահպանել այս հիմնարկութիւնը մինչև այն ժամանակ, երբ կատարած կը լինի իր սուրբ միսիան՝ իբրև բարոյական սկզբունքների հեղինակաւոր պաշտպան՝ Աւետարանի լուսով։

Հետևապէս՝ եթէ եկեղեցին ու նրա գլուխ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՇԱԲԱԹ ՄԱԿՈՒԻ ՍԱՐԴԱՐԻ ՄՕՏ *)

Մակուի սարդարը 40—45 տարեկան, բարձրահասակ և բարեհամբոյր մի անձն է, գեղեցիկ, թխադէմ և նուրբ գծագրութեամբ։ Ունի մի արու զաւակ, մօտ 18 տարեկան, որը թէև սովորում է, բայց արդէն ամուսնացած է։ Նրան դաս են տալիս 2 հոգի, մինը պարսկերէն, իսկ միւսը ռուսերէն։ Դասաւանդութիւնը կատարվում է շատ անհոգ և անսիստեմ։ Ուսուցիչներից ոչ մինը չէ հասկանում իր գործի սրբութիւնն ու վեհութիւնը և չէ գիտակցում, որ իր աշխատանքից է կախված ընդարձակ Մակուի խանութեան բազմաթիւ ազգաբնակութեան բաղդը։ Ես մի քանի անգամ ներկայ եղայ դասաւանդութեան և տեսայ անտանելի անփութութիւն և նոյնիսկ տգիտութիւն։

Սարդարն ինքն է ընդունում բոլոր բողոքաւորներին ու խնդրատուներին և ինքն էլ վճռում է բոլոր գործերը։ Ի հարկէ, դատավարութիւնը պարզ է, արագ և մեծ ծախսերից ազատ։ Նրա առաջ բողոքարկուներն ու յանցաւորները կանգնում են ազատ, ոտից-գլուխ զինված, հարիւրաւոր գնդակների շարաններով կրծքին և մէջքին։

Պէտք է նկատել, որ Մակուի ամբողջ ազգաբնակութիւնը, թէ ծեր և թէ երիտասարդ, թէ թուրք, թէ քիւրդ և թէ հայ, բոլորն էլ զինված են։

Սարդարին հետաքրքրում է ոռոգութեան տեխնիկական մասը, և նա ցանկանում է ոռոգել Արաքսին կից իր կալուածները, որոնք գտնվում են Շամբարքեանդից դէպի Տղմուտ՝ Արաքսի երկարութեամբ։

Առայժմս վճռեց շինել տալ մի ջրամբարձ կայարան, որն Արաքսից բարձրացնելու է օրական 1.400,000 վեդրօ ջուր, իսկ երբ կը տեսնի առաջին փորձի արդիւնքը, մտադիր է շատացնել կայարանների թիւը։

Սարդարի կայարանը երկրորդն է լինելու պարսից ափին, իսկ ռուսական ափերը դեռ իրաւունք չունեն Արաքսից ջուր վերցնելու...

Սարդարը դժգոհութիւն յայտնեց Ատրպատականի առաջնորդարանից, որ վերջինս հաւատալով ինչ-որ գրութեանց՝ համոզվել է, որ սարդարը խլում է Թադէոս առաքեալի վանքի հողերից և փոխանակ իրան դիմելու և իրանից իմանալու ճշմարիտը՝ դիմել է ռուսական հիւպատոսարանի ագէնտին, որը հէնց սարդարի մօտ, սարդարի հացովն է ապրում։

— Ես 160 գիւղ ունեմ. առաջնորդի այստեղ եղած ժամանակ 300 րուբլանոց ձի ընծայեցի և ամենայն պատւով էլ ընդունեցի. մի՞թէ աւելի խելացի չէր լինի հէնց ինձանից իմանալ գործի իսկութիւնը։ Մի՞թէ ես կարիք ունեմ օջախից մի կտոր խլած հողի։ Զէ՞ որ կարիք եղած դէպքում իմ սեփականութիւնից կարող եմ վանքի ունեցածի չափ հողաբաժին էլ ընծայել. հարկաւոր է միայն գիտենալ վարվելու և խօսելու ձևը։ Լրագրում վանքի գիւղի մէջ կատարված սպանութիւններին էլ ինձ են մասնակից անում, այն-ինչ, ով ինձ գիտէ, կարող է վկայել, որ ես արտակարգ սառնասրտութեամբ եմ վերաբերվել այնտեղ անցած ու դարձած շատ-շատ բաներին։

Սարդարի այդ խօսքերն ինձ յիշեցրին Թադէոս առաքեալի վանահօր և չորս-հինգ գիւղացիների սպանութիւնը, և ես ուզեցի հնար եղածի չափ պարզել այդ տխուր դէպքերի շարժառիթները։ Հարց ու փորձ անելով տեղեկացայ, որ վանահօր սպանողը բանտարկված է սարդարի մօտ, և թոյլտուութիւն խնդրեցի հետը տեսնվելու։ Ցանցաւորը հեռու չէր։ Շուտով առաջս կանգնեց մի երիտասարդ գիւղացի 30—32 տարեկան՝ Յովհաննիսեան ազգանունով, որը և պատմեց ինձ հետևեալը.

— Եղբայրս՝ Յարութիւն Յովսէփեան վանահայր Գէորգ վարդապետ Նալբանդեանի խնդրանօք գնաց և մի թուրքից պարտք առաւ 50 թուման, 30 թուման էլ վերցրեց հօրեղբօրիցս և տուեց Գէորգ վարդապետին։ Այս րոպէիս էլ այդ երկու գումարների համար ունենք մուրհակներ։ Վարդապետին կանչեցին, տարան Թաւրիզ. այնտեղից էլ նա գնաց Երուսաղէմ։ Վանահօր գնալուց յետոյ հեռագիրներ տուինք Շահթախտից, և առաջնորդարանը մեզ ուղարկեց Դանիէլ վարդապետին՝ Աղթամարի միաբանին։ Առաջնորդը, քննելով Գէորգ վարդապետի պարտքի իսկութիւնը, հրամայել էր Դանիէլ վարդապետին՝ համոզել Յովսէփեաններին, որ սպասեն մինչև կալի վերջը և ապա վճարել մեր պարտքը լիովին։ Վանքում գտնվում էր նաև բիթլիսցի Մարգապետ (ազգանունը չը գիտեմ). նա չը թողեց վճարել մեր պարտքը։ Հերու այս ժամանակ առաջնորդը վանք եկաւ. դրանից առաջ նա աբեղայ էր ձեռնադրել Թադէին, որին և ուղարկել վանահայր՝ իր գալուց առաջ։ Առաջնորդի եկած ժամանակ մենք գնացինք մեր փողերը պահանջելու. այնտեղ էր և Մակուի Արսէն քահանան։ Այդտեղ յանկարծ յայտնեցին, որ Գէորգ վարդապետը այդ գումարը պարտք է վերցրել կազմակերպութեան համար։ Առաջնորդը հրամայեց գնալ Խոյ և քննել՝ եթէ կազմակերպութեան պարտքն է, պահանջել, որ կազմակերպութիւնը վճարի, իսկ եթէ վանքի պարտքն է, վճարել վանքից։ Վանքում երկու հրացան կար։ Առաջնորդը մէկը տուեց ինձ՝ Արշակ Յովսէփեանիս, միւսը Մելքոն Մկրտչեանին և խոստացաւ մեզ միջոց հասցնել ինքնապաշտպանութեան համար։ Պարտքի համար էլ խոստացաւ կարգադրութիւն անել։ Այդ ժամանակ վանահօր ձեռքը «եարա» եղաւ, և մենք չը կարողացանք Խոյ երթալ։ Վերջը վարդապետին խնդրեցինք գնալ Խոյ, ստուգել պարտքը և վճարել, որտեղից որ պէտքն էր։ Վանահայրը գնաց Խոյ և վերադարձին յայտնեց, որ կազմակերպութիւնը իր վրա չէ առնում այդ պարտքը։ Պահանջեցինք իրանից. բայց ինքն էլ չը տուեց, մնաց մինչև աշուն։ Խոյից բժիշկ Ռուբէնը նամակ գրեց, որ հրացանը յանձնենք վարդապետին և փողերը ստանանք լիովին։ Մենք եկանք և հրացանը տարանք վանք. նա հրացանը ստացաւ, բայց ոչ պարտքին տէր եղաւ և ոչ էլ փող տուեց. այդպէս մնաց մինչև ձմեռ, երբ մեզ մի երեխայ եղաւ։ Մկրտութեան ժամանակ վարդապետի հետ մենք հրաւիրեցինք 35 մարդու և թէյ ու ճաշ տուինք։ Վարդապետը տուն գնալուց յետոյ կանչել էր 6—7 հոգու, առաջները դրել այն բաժակը, որից խմել էր, ու յայտնել, որ իրան թունաւորել ենք։ Խմելով թանն ու հաւի ծիրտը՝ սիրտը յետ էր տուել։ Այդտեղից սկսվեցին բողոքներ և թշնամութիւն։ Վանահայրը բողոք էր գրել Թաւրիզ, Ղալասար Սամփսոնին և Խոյ՝ բժ. Ռուբէնին։ Մենք էլ և մեզ հետ ժողովուրդն էլ թղթեր ուղարկեցինք այդ բողոքների դէմ, որոնք երկար մնացին անպատասխան։ Վերջը քննութեան եկաւ Սալմաստից տէր Եղիշէն, և նախ քան քննութիւն սկսելը՝ մեզանից իբրև ճանապարհածախս պահանջեց 14 թուման։ Այդ թունաւորման մասին լուրը հասել էր նաև սարդարին։ Նա կանչեց վարդապետին և առաջարկեց օտարականներին հեռացնել վանքից։ Վանքում ապրող մակուեցի Յովհաննէսը ամուսնացել էր հօրեղբօրս աղջկայ հետ։ Մի ամսից յետոյ Յովհաննէսը թողեց կնոջը, և մենք նրան բերինք տուն։ Վարդապետը սարդարի մօտ չեկաւ. արդէն հակառակութիւն սկսվեց պատւի համար, և մեր ոչ մի խնդիրը, ոչ մի առաջարկը ուշադրութեան չառնվեց։ Երբ նոյնպիսի պահանջով գիւղացիք գնում էին վանք, Յովհաննէսը վարդապետի հետ ամրացաւ բուրջի մէջ և սկսեց հրացանաձգութիւն։ Այդտեղից խփեցին և երկու մարդու վիրաւորեցին։ Դրանից յետոյ վարդապետն ու եղբայրս եկան սարդարի մօտ։ Վարդապետը խոստովանվեց, որ հրացանազարկ անողը ինքն է եղել։ Սարդարն այդ առիթով վարդապետին յանդիմանեց։ Վարդապետն ու Մելքոնը Թաւրիզ գնացին, և մենք չիմացանք, թէ այնտեղ ինչ արին։ Վերադառնալուց յետոյ ոչխարը գցել էին մեր արտերի մէջ. մենք հաւաք կանչեցինք, բայց նրանք հրացան բացին ու աչքիս առաջ սպանեցին եղբօրս, հօրեղբօրս, նրա ամենայն հայոց կաթողիկոսը կարեւոր են մեզ, օրինակ՝ հէնց կալուածական, դպրոցական և դրանց նման կարդինալ հարցերում, եթէ աւելին չասենք,—Նշանակում է՝ մեր հասարակութիւնները պարտաւոր են մօտենալ նրանց զգուշութեամբ ու հեռատեսութեամբ։

---

*) Տես «Մշակ» № 219.

Իսկ դրան հասնելու համար, մեզ հարկաւոր է մօտենալ ընտրական քուէտուփին՝ ազնիւ դրդումներով ու մաքուր ձեռքերով։

Բայց մեր հասարակական բոլոր ձեռնարկութիւնների մէջ մենք ունենք երկու՝ ասես թէ բնածին ու խոշոր պակասութիւն, այն է՝ անտարբերութիւն և անձնական շահեր,—յատկութիւններ, որոնք ոչ միայն տգեղ են, այլ և՝ մինչև սրտի խորքը դատապարտելի։

Ազգին եկեղեցու գլուխ է հարկաւոր. ինչպէս կարելի է թոյլ տալ անտարբերութիւն, փոխանակ մտածելու որ յաճախ մեր մէկ հատիկ քուէն կարող է ուղղակի ճակատագրական լինել։ Վերջապէս, անպատւաբեր է մեզ համար՝ ձայն ունենալ, ու լսելի չանել. իրաւունք ունենալ, ու չը գործադրել։ Անտարբերութիւնն արդէն շատ է քանդել մեր տունը։

Ինչ վերաբերում է անձնական շահերին, այն էլ՝ այսպիսի համազգային գործի մէջ, ես ուղղակի դժուարանում եմ այն որակել, մինքան դա ստորացնում է մարդկային արժանաւորութիւնը։

Մեզ հրաւիրում են մասնակցել կաթողիկոսական ընտրութեան։ Պարզենք, ուրեմն, բոլոր ոյժով, մեր գաղափարական կուսակցութեան դրօշակը, բայց ո՛չ՝ մեր... անձնական գծուծ հաշիւները։

Ահա թէ ինչ թեթև պարտք է դնում մեզ վրա ընտրական քուէտուփը։ Ե. ք. Ն.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ԺՈՂՈՎՐԴԱԿԱ՞Ն ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ինչ կարգ կանոն ուզես դիր,
Բայց այս ալ աղեկ գիտցիր,
Որ եթէ կարգն ու օրէնքը
Անխղճմտանք մարդկանց ձեռք են,
Ամէն ատեն ու ամէնքը
Ո՛ր դին ուզեն կը դարձնեն։
Կռիլով

Միշտ մի խումբ մարդիկ են ընտրել կաթողիկոսին, պատրիարքին և առաջնորդին ժողովրդի անունից ամեն ինչ արվում է մի խումբ մարդկանց ձեռքով։ Լաւ մարդկանցից, ազնիւ մարդկանցից, ազգի շահերը գերադասող անձնաւորութիւններից ու անհատներից է եղել կազմված այդպիսի խումբը, ընտրութիւններն էլ եղել են աջող. հակառակ արդիւնքներին հասել ենք՝ երբ այդ բոլորը կատարվել է անձեռնհաս, գուցէ և անազնիւ մարդկանց ձեռքով։

Միշտ ժողովրդի անունից, միշտ նրա շահերը իբր թէ պաշտպանելու համար։

Հնումը, ինչպէս և այժմս ինքը ժողովուրդը ի հարկէ չը կայ հրապարակում և մի խումբ մարդիկ թէ հնումը և թէ մեր օրերում օգտվում են այն հանգամանքից, որ ժողովրդի ինքնագիտակցութիւնը կամ բացակայում է, կամ դեռ շատ թոյլ է և նրա անունից կատարում են ամեն ինչ համաձայն իրանց ճաշակի և նպատակների։ Թէ հնումը և թէ մեր օրերում մեր վերջին երկու կաթողիկոսական խիստ ժողովրդական ընտրութիւններին մասնակցել են միայն աղաները և «բուն ժողովրդից» ո՛չ ոք։ Պատգամաւորներ միշտ եղել են զանազան «մտաւորականներ», չինովնիկներ, վաճառականներ, մեծատուններ, բայց ես չը գիտեմ, որ պատգամաւորներից գոնէ մինը լինէր համալ, կօշկակար, դերձակ և սրանց նման իսկական ժողովրդից դուրս եկած մարդիկ։ Երկու վերջին կաթողիկոսական պատգամաւորների (ինչպէս և Մակարի) լուսանկարները տեսած եմ. մէջը և ոչ մի բուն ժողովրդի ներկայացուցիչ։

Եթէ սա հնումը բացատրվում էր նրանով, որ ժողովրդի ինքնագիտակցութիւնը շատ թոյլ էր, նոյնը հօ չէ կարելի ասել Խրիմեանի, մանաւանդ Իզմիրլեանի ընտրութիւնների ժամանակակից ժողովրդի թոյլ ինքնագիտակցութեան մասին. ընտրողական պայքարն էլ հօ հասել էր իր գագաթնակէտին։ Սակայն այս երկու ընտրութիւնների ժամանակ էլ բուն ժողովուրդը միայն յանուանէ կար, բայց ինքը իսկական դեր չէր կատարում, այլ նրա փոխարէն միշտ նոյն աղաները, որոնք այս անգամները միայն լեզուներն էին փոխել, աւելի ազատական ոճով էին խօսում «ըստ աւուր պատշաճի»։

Այս էլ պէտք է արձանագրել, որ այս երկու բուն ժողովրդական կաթողիկոսների ժամանակ էլի նոյն աղաներն էին, նոյն ընտրող խումբը, մի խօսքով ժամանակակից ամիրաները, որ ամեն տեղ մտնում էին՝ զանազան կառավարչական մարմինների մէջ (ուսումնարանների հոգաբարձուներ, երէցփոխներ և այլն), և ժողովրդի անունից, բայց առանց ժողովրդի գիտութեան և մասնակցութեան (ինքնագիտակցութիւն կա՞ր ժողովրդի մէջ) կառավարում էին ժողովրդի անձեռնմխելի գոյքը և կայքը... ձեռնմխելիօրէն։

Ժողովուրդը ինքը հօ չէ կարող մեր ազգի գործիչների հետ լաւ ծանօթ լինել, չէ կարող էլ արժանաւորապէս գնահատել նրանց։ Ժողովրդին, ամբոխին պէտք է ծանօթացնել այս կամ այն գործիչի հետ, և նայած՝ թէ ինչպէս կը ծանօթացնես, ինչ վկայութիւն կը տաս նրա մասին, ըստ այնմ էլ ժողովուրդը կընդունէ այդ գործիչին։ Ուրեմն եթէ ժողովրդին ասում են թէ՝ այս կամ այն ընտրութիւնը ազգային որ և է հիմնարկութեան, որևէ հաստատութեան համար պէտք է դու անես, դա քո իրաւունքն է—պէտք է նրա առաջը դնեն այնպիսի անձանց, որ ժողովուրդն էլ դրանց ընտրելով՝ իսկապէս իր շահերին, իր օգտին վնաս չը լինի հասցրած։

Սակայն չէ որ կարելի է շատ լաւ խօսել, բայց շատ վատ գործել. յանցագործն էլ շատ յաճախ լաւ, սրբալեզու խօսքերով է խօսում, բայց արածը միշտ լինում է յանցագործութիւն։ Նրանց բերանը խօսում է, խիղճը ննջում, եթէ դեռ խղճի նշոյլ մնացած է լինում նրանց մէջ։ Իսկ ժողովուրդը, խեղճ, միամիտ ժողովուրդը հալած իւղի տեղ ընդունելով այդպիսի ըստ արտաքինի բարեմիտ խորհուրդներ, վերջը իրան տեսնում է հարստահարված յանուն իր շահերի։ Ինչո՞ւ։ Որովհետև այդ ամենը արվում է միշտ յայտնի նպատակներով, արվում է անազնիւ վերաբերմունքով դէպի ժողովուրդը, որից և ափշկարա գողանում են նրա իրաւունքները իբր թէ նրա շահերը պաշտպանելու համար ծնված «կարապետներ»։

Մամուլի պարտքն է այդպիսի պարագաների մէջ ամենաազնուաբար վարվել ժողովրդի հետ, անաչառ դեր կատարել ժողովրդի աչքերը բաց անելու հարցում, մի կողմը թողնել կուսակցական նեղ շրջափակը և ոգեւորվել միայն և միայն ժողովրդի, ընդհանուրի իսկական շահերով։

Դժբաղդաբար վերջին տարիներս մենք տեսնում ենք, որ ժողովուրդը դառել է մի զարմանալի թեթև մակոյկ, որ ընկած է զանազան կուսակցական հոսանքների մէջ, և ինչ հողմ ասես որ նրան, այդ մակոյկին դես ու դէն չը գցէ։ Խեղճ մակոյկ, ինչքան այդպէս քեզ հետ վարվեն, ափից այնքան հեռու դու կը տատանվես ալեաց մէջ։

Հեռու չէ այն օրը, երբ այդ ալիքները քեզ կը լափեն և կամ վերջ ի վերջոյ խութերի վրա քեզ պիտի ջարդեն...

Բժ. Արտաշէս Շխեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի նահանգապետը տեղեկացրեց քաղաքագլխին, որ Կովկասում երկրաշարժից վնասվածների օգտին հանգանակված 76,000 րուբլուց Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան բարեհաճել է թոյլատրել 10,000 րուբլին յանձնել Քութայիսի նահանգի հեղեղից վնասված ազգաբնակութեանը, եթէ միայն դէմ չեն լինի նուիրատուները։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի նոր ձայնաւորների ընտրողական ցուցակները արդէն պատրաստ են։ Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցողները յիշեալ ցուցակները կը ստանան այս ամսի 20-ին։

◆ Մեզ հաղորդում են հետեւեալը. «Դաշնակցութեան» գործով բոլոր մեղադրվողների կողմից վերջին անգամ առաջարկված վկաների թիւը հասնում է 3000—3500-ի։ Այդ վկաների մէջ կան և մի շարք կառավարական պաշտօնական անձնաւորութիւններ, ինչպիսիք են գեներալներ Մալամա, Ֆլէյշեր, Զօլօտարեօվ, Գօլօշչապօվ, նահանգապետներ Տիզէնհաուզէն, պրինց Նապօլէօն և այլ պետական գործիչներ։ Մեղադրվողներին կը պաշտպանեն Պետերբուրգի և Մոսկվայի նշանաւոր փաստաբանները, ինչպիսիք են Զարուդնի, Տեսլենկօ, Մուրավեօվ, Սօկօլօվ, Անդրօնիկօվ, Մալենտօվիչ, Պերեվերզեւ, Կերենսկի և ուրիշները»։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը Աբասթումանի թոքախտաւորների սանատօրիայի կառուցման համար յատկացրեց 1000 րուբլի։

◆ Հոկտեմբերի 6-ին, կէսօրվայ ժամը 4-ին, Թիֆլիսի դատաստանական պալատը 4-ժամեայ խորհրդակցութիւնից յետոյ կարդաց իր դատավճիռը Խիտարօվի, Մգալօբլիշվիլիի, իշխ. Երիստովի և միւսների գործի առիթով, որոնք մեղադրվում էին 148,400 րուբլի յափշտակելու մէջ։ Դատաստանական պալատը Երևանի նահանգական դատարանի վճիռը բեկեց և որոշեց՝ յանցաւոր ճանաչել պաշտօնեայ Խիտարօվին և թղթատար Մախարաձէին նրանց վերագրված յանցանքի մէջ և, զրկելով նրանց բոլոր իրաւունքներից, բանտարկել $3^1/_2$ տարով իւրաքանչիւրին։ Իսկ նախկին ուսանողներ իշխ. Երիստովին և Մգալօբլիշվիլին նոյնպէս ճանաչել մեղաւոր և դատապարտել մի տարով բանտարկութեան՝ զրկելով բոլոր իրաւունքներից։ Կարապետ Բօյաջեանի վճռաբեկ բողոքագիրը թողնել անհետեւանք։ Քաղաքացիական պահանջը յարգվում է լիակատար չափով։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի վերատեսուչը դարձեալ խստագոյնս պատուիրել է վատմաններին իրանց ծառայութեան ժամանակ չը խօսել ոչ ոքի հետ։

◆ Երևան և Կարս մեկնեց Թիֆլիսի դատաստանական պալատի նստաշրջանը։

◆ Թիֆլիսում նախագծվում է հիմնել ազատ հրդեհաշէջների խումբ։

◆ Կիրակի օրը Ժողովրդական Տանը կը լինի հանրամատչելի դասախօսութիւն։

◆ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը վաղն է։

◆ Հոկտեմբերի 11-ին Զուբալօվեան Ժողովրդական Տանը ռուս թատերասէրների խումբը կը ներկայացնէ Դոստոեվսկիի վէպից պիէսի փոխադրված «Յանցանք և պատիժ» 2-րդ անգամ։

◆ Այսօր Թիֆլիսի հասարակական կլուբում (Բօրսայի դահլիճ) տեղի կունենայ ներկայացում։ Ռեֆերատի ընթերցումը յետաձգվում է հետեւալ կիրակի օրվան, հոկտեմբերի 16-ին։ Գեպշտէյնը կը դասախօսէ Վ. Կօրօլէնկօյի մասին։

◆ Ինչպէս լսվում է, Սօլօլակում ևս բացվելու է պօստային բաժանմունք։

◆ Թիֆլիսի նահանգապետն առաջարկել է քաղաքային վարչութեան և Թիֆլիսի նահանգի աւագներին իր ժամանակին պատրաստել ներկայացնել իրանց նախահաշիւները։

◆ Թիֆլիս է գալու մօտիկ ապագայում մի համերգ տալու գնչուական ռօմանսների յայտնի երգչուհի Անաստասիա Վեալցեվան։

◆ Մեզ տեղեկացնում են, որ սկսած Նախիջևանից մինչև Ղամարլու ամբողջապէս ձիւնով է ծածկված։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկերութեան դահլիճում նշանակված է Կովկ. Հայոց Հրատ. Ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովի շարունակութիւնը՝ պաշտօնավար անձանց լրացուցիչ ընտրութիւնների համար։

◆ Հոկտեմբերի 4-ից լոյս 5-ի առաւօտ Թիֆլիսի շրջանում—Ղարաեազում, Բօրչալուում—օդը հետզհետէ ցրտելով ջերմութիւնը ընկաւ զերօյից ցած և նոյնիսկ 3°-ի ըստ Րէօմիւրի. շնորհիւ դրա՝ ցրտահար եղան բամբակները, թառամեցին բոլոր տերևները և ծաղիկները, մասամբ կնկուղները սևացան։ Եւ այսպէս, շնորհիւ այդ ցրտերի, մեր բամբակագործները կորցրին սպասելիք բերքի $^1/_3$-ը, որը, եթէ փողի վերածենք, կանի մի միլիօնից աւելի։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ Այս տարվայ գարնանը Քութայիսում վախճանված վրաց անուանի երաժշտագէտ Փ. Քօրիձէի յիշատակը յարգողների մի խումբ որոշել է կիրակի, հոկտեմբերի 9-ին, Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցում կատարել հոգեհանգստեան կարգ։

◆ Գինի արդիւնաբերող «Կախէթիա» ընկերութիւնը Թուրինօյի միջազգային ցուցահանդէսից, իր արտադրած գինու բարձր յատկութեան համար, ստացաւ ոսկէ մեծ մեդալ, վկայական և գինանշան։

◆ Հոկտեմբերի 5-ին կայացան վրացի ընտրողների ժողովներ երկու տեղում։ Նախալօվկայի լսարանում խմբվածները խորհրդակցեցին ապառիկների վճարման մասին, իսկ ապա քննութեան առան գործունէութեան ծրագիրը։ Ընտրողական 7-րդ մասումն էլ ժողովականները քննեցին նոյն հարցերը։ Երկու ժողովատեղերն էլ լի էին վրացի ընտրողներով։ Պէտք է նկատած, որ վրացի ընտրողների մէջ վերջերս խոշոր չափերի է հասնում, այսպէս ասած, «ազգային ինքնագիտակցութիւնը»։ Մարդիկ որոշել են, ինչ էլ լինի, Թիֆլիսի քաղ. գործերը իրանց ձեռքը գցել, որպիսի նպատակին հասնելու համար ամեն ճիգ ու ջանք թափում են։ Այս բանին պակաս չէ նպաստում իրերի ներկայ անկերպարան կացութիւնն ու անմխիթար վիճակը, մանաւանդ որ ազգայնական ոգով առաջնորդվողների բանակը այսօր պահում է մի քանի օրաթերթեր ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և Քութայիսում, որոնք օրն ի բուն հրահրում են վրացիների նեղ ազգայնական զգացումները, կռիւ մղելով վրացի կօսմօպօլիտների և «միջազգայնական հայ բուրժուազիայի դէմ»։ Պիտի խոստովանած, որ սրանք բաւական աջող հունձ ունեն։ Ժամանակն է այդպէս։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Ժողովրդական Տան թատրօնում

I

Ընտանիքի նահապետական ու նոր բուրժուական տարրերի բախման պատկերն է ցուցադրվում «Վանիւշինի զաւակների» մէջ, որ դրված էր Ժողովրդական Տան բեմի վրա հոկտեմբերի 5-ին։ Հնի և նորի միջև եղած հակասութիւնները չափազանց սուր կօնտրաստներով է ներկայացրել Նայդէօնօվը, պիէսի հեղինակը, մինչդեռ կեանքի երևոյթների մէջ, ինչպէս և բնութեան, այդօրինակ սուր հակադրութիւններ առանց միացնող օղակների չեն լինում։ Natura non facit saetus. Սա կիրառելի է նաև կեանքի երևոյթների նկատմամբ։

Հեղինակը, ըստ երևոյթին, չէ նկատել երկու հակոտնեաները իրար հետ շաղկապող օղակների գոյութիւնը, ուստի և այդ հանգամանքը պիէսի պակասաւոր գիծը պէտք է համարել։ Հայրը իր զաւակներին իսպառ չէ ճանաչում (բառիս իսկական մտքով), չը նայելով որ բոլորն էլ իր տանն են ապրում... Թէպէտ պիէսը սկսվում է որոշ էֆֆէկտով, բայց աչքի է ընկնում և իր դէֆֆէկտներով։

Այս անգամ պիէսի կենտրօնական դերը կատարում էր պ. Թաշճեանը (Վանիւշին)։ Անշուշտ նրա խաղը չը տուեց տիպի ամբողջութիւն, սակայն այն մի քանի շտրիխները, որոնցով նա կարողացաւ շնորհալիօրէն ընդգծել տիպի գլխաւոր տարրերը, մի անգամ ևս համոզում են մեզ, որ այդ երիտասարդ բարեխիղճ դերասանը ունի համակրելի ապագայ, եթէ իր ոյժերի վրա յոյս դնելով անընդհատ կատարելագործվի։ Սոսկ խրախուսանքի վրա հիմնված անձնավստահութիւնը, առանց ինքնակատարելագործութեան, հաւատացէք, ողբերգական երևոյթ է ժամանակակից դերասանի համար։

Ամօ-Խարազեանի և տ. Ստեփանեանի խաղերի վերաբերմամբ կասենք, որ նրանց դերերի կատարման մէջ, սակաւ բացառութեամբ, տիպերին համապատասխան բնորոշումներ չը գտանք. տիպական գծերի ըէլիէֆ արտայայտութիւնը գրեթէ բացակայում էր։ Առհասարակ պիէսը սպասվող տպաւորութիւնը չէր կարող թողնել, քանի որ դերակատարների մեծ մասը սիրողներ էին։ Յամենայն դէպս վերջիններիս մէջ աչքի էին ընկնում Հայկազեան և Գալուստեան, որոնց մէջ նկատելի է բեմական որոշ փորձառութիւն, իսկ ռեժիսօրի գործ դրած ջանքերի արդիւնաւէտ հետևանքը։

Այս անգամ թատրօնը $^1/_3$-ով դատարկ էր։

Սուր.

II

Մեր առաջն է հրէական մի ընտանիք, որի գլխաւոր անդամը՝ Մալկիէլ Գօրբարնիկօվը հարուստ կաշեգործարանատէր է ու ինքնին ժլատ, վաշխառու ու տգէտ։ Նրա հարազատ ու արժանաւոր յաջորդն է աւագ որդի Խացկէլը։

Մալկիէլը բացի որդուց, նաև Փրումա կնոջից, ունի մի կրտսեր զաւակ ևս Բէն-Ցէօն անունով, որ բոլորովին հակապատկեր է հօր և եղբօր դիմաց։ Որոշ չափով զարգանալով շնորհիւ ծերունի Իսրայէլ Ցակոբի տուած գրքերի, Բէն-Ցէօնը մի անգամից ըմբռնում է իր շրջապատի խեղդուկ մթնոլորտը և սկսում է արդարութեան ու անկեղծութեան որոնումներ երազել։ Եւ որքան ընտանիքի մէջ այդ պատանին համարեա ամեն քայլափոխում ընդհարվում է կեղծիքին, ստորաքարշութեանը և սոսկ նիւթապաշտութեանը, այնքան աւելի ուժգին է դառնում նրա ջերմ ցանկութիւնը՝ հեռանալ րօպէ առաջ իր համար այդ օտար աշխարհից, վայրկեան առաջ ազատել իր կաշկանդված հոգին ու միտքը, թօթափելով վրայից հայրենական օջախի սպանիչ կապանքները...

Ո՞ւր գնաց ապա։ Ո՞ւմ մօտ և որտեղ գտնէ իր հոգեկան անդորրութիւնը, հեռու, մարդկային գծուծ շահերից, հեռու լոկ սին կեանքից...

Սակայն, միջավայր կոչված ահեղ հրէշը դեռ բաղխելու է երիտասարդ մարտնչողին իր հայրենի տնից դուրս միևնոյն ագիտութեան, դատարկ նիւթապաշտութեան, մոլութեան ու անարդարութեան հարեան ընտանիքում, որ, իբրև ներհակ Գօրբարնիկօվի ընտանիքին, ուսեալ է, ունի ըստ երևոյթին կրթված հայր, ինժինէր-տեխնօլօգ որդի և մի աղջիկ։

Բէն-Ցէօնը դեռ սկզբից, լքման ու յուսահատութեան ծանր ժամերին, օրիորդի նուազածութեան ազդեցութեան ներքոյ, մի տեսակ սիրոյ ձգտում է զգում դէպի նա, պատկերացնելով աղջկան իր իդէալը։ Սակայն երբ Բէն-Ցէօնը գալիս է օրիորդի մօտ և իր պարզամիտ սէրն է յայտնում նրան, վերջինս, չը նայած որ ընդունում է երիտասարդի ազնիւ հոգին ու լաւ զգացմունքներին, բայց այդ ամենը իբրև խղճահարութեան արգասիք ի դիմաց երիտասարդի թեթեւամիտ լինելու ենթադրութեան, մերժում է, յայտնելով թէ ամուսնանալու է Բէն-Ցէօնի եղբօր հետ, որ շատ դրամ ունի։ Իսկ «կրթված» ինժեները, որ լոկ փողին ու դատարկ նախագծերով է տարված, իր շահի տեսակէտից համոզում է քրոջը ընդունել դատարկապորտ, բայց ունեւոր Խացկէլի ձեռքը...

Բնականաբար այդ ամենը լցնում է անկեղծութիւն որոնող և դրա համար բոլորից «չուդակ», խենթ համարվող Բէն-Ցէօնի սիրտը, և նա բոլորի ճակատին խփում է այն կեղտը, որի մէջ նրանք թաւալվում են մտքով ու հոգով... Յուսախաբ է նա, որ անգամ գիտութեան և երաժշտութեան մէջ կան կեղծիք, շահամոլութիւն, իսկ անկեղծութիւնն ու սէրը բացակայում են...

Վհատված հոգեպէս՝ խենթը հեռանում է ընտանիքի ապականված կեանքից ու ապրելու համար գնում է իր ծերունի բարեկամ Իսրայէլի տունը, ուր մնում է երկու ամբողջ տարի։ Թէև արհեստով ժամագործ, բայց բարեհոգի ու շիտակ Իսրայէլը իր պառաւի հետ խնամք ու սէր է ցոյց տալիս հալածական Բէն-Ցէօնին։ Իսկ սա անգործ չէ մնում։ Նրա ճախրող միտքը հնարում է մի նոր տեսակի գործիք, որը դժբաղդաբար դառնում է խուժանի վրէժխնդրութեան առարկայ։ Ասելով որ մեքենայի մէջ ինչ-որ «անմաքուր ոգի» է նստած, խուժանապետը ջարդում է խիզախ մտքի գեղեցիկ արտադրութիւնը...

Փորձութեան բաժակը լցված է. արդարութեան ու ազնւութեան որոնողը յաղթահարված՝ կեանքի անագորոյն օրէնքից... Նա միայնակ անզօր գտնվեց ազնիւ մնալ այն միջավայրում, ուր ամենքն են անազնիւ. Նա անկարող եղաւ բարձր կանգնել խաւարամիտ ամբոխից և կեղծ գիտութիւնից... Նա խորտակվելու է մենակ իր մաքուր խղճով ու սաւառնող մտքով...

Եւ երբ մայրը և իր սիրոյ նախկին էակ, իսկ այժմ իր եղբօր կինը դարձած Լիզան նրան խաբեբայութեամբ, հօր մահամերձ լինելը պատրուակ բերելով, Բէն-Ցէօնին տանում են դարձեալ իր հայրենական տունը ժառանգութեան կէսը նրան բաժին հանելու նպատակով, Բէն-Ցէօնը իր ամբողջ մաղձը թափում է իսկական «չուդակ»-խենթերի երեսին, ըստ արժանւոյն դրուատե-

---

որդուն և մի աղջկան էլ վիրաւորեցին։ Այս բոլորից յետոյ էլ երբ նրանք չը խաղաղվեցին և չուզեցին հաշտվել մեզ հետ, ես ինքս հրացանազարկ արի վարդապետին։ Վանքում այժմս Յովհաննէսն է ապրում, որը փախցնում է մեր կողմնակիցների եզները, իսկ ես էլ մնացել եմ այստեղ բանտարկված։

— Ինչի՞ց իսկապէս առաջացան այդ հակառակութիւնն ու սպանութիւնները։

— Ես պատմեցի, որ ամբողջ գործը սկսվեց 80 թումանի համար (140 ր.), դրա փոխարէն ստացված հրացանի և հօրեղբօրս աղջկայ պատւի համար։ Բացի Յովհաննէսից՝ վանքում կային և կան երկու քառասնական տարեկան կանայք, որոնք նոյնպէս հրացան են արձակում մեր կողմի կանանց վրա։ Առաջնորդարանը ինչպէս սկզբում, այնպէս էլ մինչև այսօր ոչինչ չէ անում այս վայրենի կացութեանը վերջ տալու։ Ոչ մի պատասխան, ոչ մի գրութիւն չենք ստացել և թէ ինչո՛վ կը վերջանայ այս բոլորը, դեռ չը գիտենք։

Այս անպաճոյճ պատմութիւնը ես արձանագրեցի հէնց Արշակ Յովսէփեանի բերանից, որովհետև Թադէոս առաքեալի վանքի շուրջը թափվում է Մակուի խանութեան մէջ ապրող մի բուռն հայերի արիւնը, և այն՝ ոչ թէ քիւրդերի և թուրքերի, այլ հարազատ եղբայրների ձեռքով, եղբայրներ, որոնք մնացորդն են Հայաստանն ազատողների և դարձեալ նրանց համար վերցված պարտքի, նրանց մի հրացան ու թողած կնոջ համար։ Եւ դեռ կան մարդիկ, որոնք ուզում են վերադառնալ այդ սև մղձաւանջին, այդ՝ մեր պատմութեան տխուր էջերին։

Ղարադաղի դէպքերն էլ էին սոսկ թուրքերին վերագրում, բայց փաստերը եկան ջրելու սկզբնական սխալ լուրերը։

Բախչաջըլս ես մնացի 3 օր և գտայ նահապետական հիւրասիրութիւն։ Սարդարը մտադիր է ռոգել հետզհետէ իր ընդարձակ կալուածները, կառքի ճանապարհ շինել մինչև Մակու, ունենալ էլեքտրական լուսաւորութիւն և այլն։ Ցանկութիւններ, որոնք և կարևոր են, և օգտակար, իսկ սարդարի համար հեշտ իրագործելի, որովհետև և մարդիկ ունի, և մեծ հարստութիւն։

Այդ միջոցներին Մահմէդ-Ալի միրզան արդէն Պարսկաստան էր մտել իր կորցրած գահը յետ բերելու։

Սարդարը մեծ հետաքրքրութեամբ լսեց «Рус. Сл.»-ի հեռագրական տեղեկութիւնները, բայց ոչ մի կերպ չարտայայտեց իր զգացածն ու սպասածը։

Չորրորդ օրը ես ճանապարհ ընկայ դէպի Շահթախտի, որոշելով՝ անպատճառ հանդիպել Մակու՝ Աղա-խանին, որը նոյնպէս մեծ կալուածատէրերից մէկն է։

Ցաւելով պէտք է նկատեմ, որ Աղա-խանը բացակայ էր, և ես տեսնել չը կարողացայ։

Դառնալիս կրկին մի օր մնացի հիւրասէր Հաջի Աղաբէկի մօտ և վերադարձայ Շահթախտի։

Մակուի սարդարի կալուածների մարգարիտն է Նախիջևանի հանդէպ Արաքսի ափին ձգվող ընդարձակ դաշտավայրը, որի մեծ մասը՝ շնորհիւ հողի կազմութեան և Արաքսից համեմատաբար ոչինչ բարձրութեան, բոլորովին կարիք չունի ռոգութեան և հէնց այժմս էլ անջրդի բամբակ և սեխ է բուսցնում, իսկ չը հերկված մասը ծածկված է 3—4 արշին բարձրացող զանազան բոյսերով։

Որպիսի անցեալ է ունեցել այդ գեղեցիկ և հարուստ երկիրը, որպիսի խիտ ազգաբնակութիւն, դրան ապացոյց է այն աւերակ քաղաքների շարքը, որով ճանապարհորդն անցնում է Արաքսից մինչև Մակու։

Իսկ այժմս, 20-րդ դարում, ժողովուրդը զուրկ է սեփականութիւնից. նա աշխատում է ուրիշների համար բամբակից $^1/_3$, իսկ հացահատիկներից $^2/_{15}$-ը վճարելով հողատէրերին. բայց կան տեղեր, որոնց բերքից հողատէրերը բերքի կէս մասն են պահանջում և հետն էլ ուրիշ հազարաւոր զրկանքներ հասցնում աշխատաւորներին։

Եւ կան մարդիկ, որոնք կարծում են, որ այսպիսի տարտարոսական կարգերի պաշտպանները Մահմէդ-Ալի միրզայի հետ պէտք է կարողանան վերահաստատվել միապետական գահի վրա։

Սխալ յոյսեր, որոնք հիմնված են տգիտութեան և պարսիկ աշխատաւոր ժողովրդին շահէշխանների և այլ աւազակների հետ շփոթելուց։ Գ. Մուրադեան լով նրանց, մերկացնելով բոլորի բովանդակ դատարկութիւնը...

Մինչ այդ ներս են մտնում և առաջարկում են Մակիէլին ստորագրել «անհաւատ ու վտանգաւոր» «չուղակին» գիւղից հեռացնելու թուղթը, որն արդէն ստորագրել են Բէն-Ցէօնի եղբայրը և ինժեների հայրը: Ինժեները նոյնպէս չի յապաղում իր ստորագրութիւնը աւելացնելու եղածների թւում:

Վերջին հարուածը տրված էր Բէն-Ցէօնին, որ պահանջում է Լիզայի նորածին երեխային, գցվում է նրան և երանի տալիս, որ չէ տեսնում, չէ լսում, ինչ որ իրանից մեծերն են անում ու խօսում...

Եւ չը կամենալով հասնել այն ստորութեան, որ ամբոխը ոյժով արտաքսէ իրան գիւղից, Բէն-Ցէօնը ինչպէս մի կայծ ընդհանուր պժգալի խաւարի մէջ հանգչում է, անձնասպան լինելով...

Գօրդինը իր վարպետ գրչով ինչպէս իր նախկին պիէսներում—«Սատանայ», «Միրա Էֆրոս»—«Чудакъ»-ի մէջ առողջ սատիրով խարազանում է նաև զանազան սնոտիապաշտութիւններ, սովորութիւններ և խօսակցութիւններ, որոնք տիրում են ընտանիքների մէջ: Բացի դրանից, նա ծերունի ճշմարտախօս Իսրայէլի բերանով բողոքում է, երբ մի մասնաւոր հրէայի բացասական յատկութիւնները ոմանք վերագրում են ամբողջ հրէութեան:

Յիշեալ պիէսը աջող ներկայացվեց հոկտ. 4-ին Զուբալովեան Ժողովրդական Տանը՝ ռուս թատերասէրների ձեռքով:

Դերակատարներից Սմոլենսկի, Իրանսկի, Բէստուժեվ, Բարմասով, Մամիկոնեան, տ. Ասլանեան բոլորն էլ իրանց տեղերումն էին: Դերասան Սմոլէնսկին (Բէն-Ցէօն) առանձնապէս արժանացաւ թատրոնը լի հասարակութեան ովսանային:

Ցանկալի է «Чудакъ»-ը տեսնել նմանապէս հայ բեմի վրա: Ե.

ՓԱՓԱԶԵԱՆԸ ԻՐ ԳՐԱԽՕՍԻ ԴԷՄ*)

Սակայն ամենից ծիծաղելին այն է, որ դուք թարգմանական գրականութիւնը մատենագիտութիւն համարելով դուրս էք գցում ընդհանուր գրականութիւնից:

Էլ ինչու համար էք 292-րդ երեսում ասում Մխիթարեանների մասին, որ նրանցից իւրաքանչիւրը «աշխատել է հարստացնել հայ գրականութիւնը զանազան հեղինակութիւններով, թարգմանութիւններով և կամ հետազօտական երկերով»:

Ձեզ համար էլ ակներև է, որ դրանք գրականութեան ճիւղերն են: Ինչպէս և՝ փիլիսօփայական, հասարակագիտական, սիմվոլական, ժողովրդական և այլն, որոնց նոյնպէս դուրս էք ձգել:

Արդ՝ եթէ դրանք գրականութեան ճիւղերն են, ուրեմն պէտք է ունենային իրանց յատուկ տեղը և ներկայացուցիչները գրականութեան պատմութեան մէջ:

Ես այնպէս եմ հասկանում: Բայց որ դուք, առանց հասկանալու, թէ ի՛նչ բան է գրականութիւնը և նրա պատմութիւնը, վերցրել էք ու գրականութեան պատմութեան դասագիրքը կազմել, դրանում ոչ մի կասկած չը կայ:

Իբրև ապացոյց նայեցէք հէնց գրքի երեսը, ուր «պատմութիւն հայոց գրականութեան» տակ գրել էք «բանահիւսութեան պատմութիւնը»:

Բանահիւսութիւն ասելով հասկացվում է առհասարակ գեղեցիկ դպրութիւնը. ուրեմն ինչ որ գեղեցիկ դպրութիւն չէ կամ բանահիւսութիւն, արժանի չէ գրականութեան պատմութեան էջերն ընկնելու:

Որ դուք այդպէս էք հասկանում, այդ երևում է ձեր գրախօսի, այսինքն իմ դէմ ուղղված պատասխանում («Հօրիզոն» №212), ուր բացարձակապէս մատենագրութիւնը զատում էք բանահիւսութիւնից:

Սակայն միայն այդ օրինակը չէ. առհասարակ նկատելի է, որ ձեզ համար գրականութեան ճիւղաւորութիւնները այնքան էլ պարզ ու հասկանալի չեն. դրա ապացոյցներից մէկն էլ Ս. Պալասանեանին իբրև քննադատ ներկայացնելն է:

Պալասանեանը քննադատ չէ, կրիտիկ չէ, այլ միայն բիբլիօգրաֆ:

Յամենայն դէպս, եթէ հայ ամսաթերթերը—«Արաքս», «Մուրճ», «Տարազ-Աղբիւր»—ուշադրութեան առած լինէիք, նոյնպէս և աչքի անցրած՝ օրաթերթերը, դժուար չէր լինի ներկայացնել այդ ճիւղի քննադատութեան նմուշները: Ինչո՞վ քննադատ չէ Լէօն, Եղիշէ Մադաթեանը, Մ. Բերբերեանը, Վ. Նալբանդեանը:

Ինչո՞վ լուրջ քննադատութիւն չէ բժ. Աղասարեանցի քննադատութիւնը «Մշակի» մէջ՝ Շիրվանզադէի «Արմենուհու» մասին, կամ Գ. Եղիազարեանի ժողովածուին նորագոյն գրողների մասին, Ա. Քալանթարինը՝ հէնց ձեր իսկ գրածների մասին:

Իսկ յետոյ... յետոյ, պ. Փափազեան, այդ ինչ դատողութեան մասին էք խօսում մամուլի էջերում...

Ի՞նչպէս էք թոյլ տալիս ձեզ հեգնել գրական տրադիցիան և էտիկան:

Ուշքի եկէք:

Չէ՞ որ դուք ինքներդ էլ դիմում էք այդ նոյն տրադիցիային: Բաց արէք 516-դ երեսը և կարդացէք ծանօթութիւնը սեփական աչքերով:

«Կենդանի և հրապարակում դեռ ևս գործող, մանաւանդ երիտասարդ գրողների մասին հարկ եմ համարում լինել համառօտ,—ասում էք դուք:—Կենդանի գրողները դեռ չեն ասել իրանց վերջին խօսքը, դեռ ևս չեն պատկանում պատմութեանը»:

Հետևապէս կենդանի գրողները՝ թէ մեծ և թէ փոքր՝ չեն պատկանում պատմութեանը:

Իսկ ի՞նչ բան է ձեր կազմածը: Ո՛չ միայն լոկ պատմութիւն ընթերցանութեան համար, այլ մի կարևոր դասագիրք, դասագիրք դպրոցների համար՝ «Պատմութիւն հայոց գրականութեան» վերնագրով:

Ուրեմն եղէք հետևողական: Յանուն գրական տրադիցիայի ու էտիկայի իմ արած պահանջը դրանից աւելի չէ, այլ նոյնիսկ պակաս:

Կենդանի գրողներից պատմութեան էջերը մտցնէիք նրանց, որոնք գրական բեղմնաւոր կեանքի փոքր ի շատէ երկարատև շրջան են բոլորել, ուշագրաւ աշխատութիւններ տուել, աչքի են ընկնում իրանց դէմքով. բայց դուք այդ չարած՝ ուղղակի անցնում էք սկսնակներին, ոտնակոխ անում ձեր իսկ ասածները և հրճուանքով հեգնում գրական տրադիցիաները:

Չէք հետևում՝ Տէրը ձեզ հետ. գոնէ, մի՛ էլ արհամարհէք, մի՛ էլ հեգնէք հրապարակօրէն, որովհետև չէ կարելի մի այդպիսի գործում ղեկավարվել անհատական համակրութիւններով ու հակակրութիւններով, չէ կարելի կամայական անպատեհութիւնները, կասկածելի աշխարհահայեացքներն ու ըմբռնումները դարձնել պարտադիր ելակէտ մատաղ սերնդի մտաւոր որոնումների համար:

Չէ կարելի, բայց ինչ արած, որ գայրոյթով բռնկված Վ. Փափազեանը, իր սեփական հակասական կարծիքների, տրամաբանական աբսուրդների ու միտումաւոր, վայր ի վերոյ պարզաբանութիւնների մէջ խճճված՝ կորցրել է գլուխն էլ, ըմբռնելու կարողութիւնն էլ:

Ապա թէ ոչ՝ դժուար չէր նրա համար հասկանալ, որ իմ յիշած գրողներին ես թւել եմ օրինակի համար, այլ ոչ թէ իբրև գրականագէտների մի ցանկ՝ յանձնարարել եմ անպատճառ մտցնել իր գրքի մէջ:

Թէև որքան էլ այդ ցանկը լինի թոյլ ու պատահական հաւաքածու, լինի թերի, այնուամենայնիւ այնտեղ կան մեծութիւններ, որոնց ուրանալու իրաւունք չունի գրականութեան անաչառ պատմագիրը և անպայման յատուկ տեղ պէտք է տար այդպիսիներին աւելի շուտ, քան թէ Փափազեանն է տալիս մի քանիսին:

Իմ ասածը շատ պարզ է: Չը պէտք է յատուկ տեղ տալ պատմութեան էջերում այնպիսի գրողների, որոնց գրական ոյժ լինելը դեռևս ստուգված, ճշդված չէ, մանաւանդ նրանց, որոնք «իրանց վերջին խօսքը չեն ասել, որոնք պատմութեանը դեռ չեն պատկանում», ինչպէս դուք էք ասում:

Ուրեմն տեղ յատկացնել միայն նրանց, որոնք իսկապէս որ պատկանում են պատմութեանը:

Այսինքն չանել այնպէս, ինչպէս դուք էք արել... Դոդոխեանին յիշելով անցողակի, այն էլ ուղիղ կէս տողում (367-րդ եր.), «Մեղուի» հեգնաբան «Բաղդցուն» մի տողում, և ուղիղ երկու բառով էլ այն «Սախացուն», որի ֆէլիէտոնները իր խարազանող յանդգնութեամբ, իր մտքերի նորութեամբ, համարձակութեամբ ու սրամտութեամբ մինչև այսօր էլ պահպանել են իրանց ոյժն ու հետաքրքրութիւնը:

Ահա այդպիսի գնահատութիւններ է անում Վ. Փափազեանը:

Երանի թէ միայն այդքանով բաւականանար, բաւականանար սխալներով, միակողմանի ու աչառու գնահատութիւններով, խօսքեր խեղաթիւրելով:

Դրանից աւելի խոր տղմի մէջ է խրըվում նա սակայն, դիմում է բացարձակ կեղծիքի, պատմական կեղծիքի, երբ խօսում է 539-դ երեսում կուսակցական հալածանքների մասին գրողների նկատմամբ: Իբրև թէ «Մշակը» եթէ չէ հալածել հակառակ ուղղութեան գրողներին, գոնէ արհամարհել, անարգել է, ինչպէս օրինակ, Մուրացանին, Նար-Դոսին:

Մինչդեռ «Մշակը» և մշակականները երբէք չեն հալածել, ոչ էլ արհամարհել կամ անարգել Նար-Դոսին, ոչ նոյնիսկ Մուրացանին իբրև գրողի:

Այլ բան է, եթէ չեն խրախուսել:

Այդ հանգամանքը Փափազեանը կարևոր է համարել յիշատակել գրականութեան պատմութեան դասագրքի էջերում: Ասել է՝ կարևոր դեր էր խաղում, կարևոր նշանակութիւն ունէր «Մշակը»: Արդ՝ եթէ այդ այդպէս է, հապա ինչո՞ւ չէ անցկացված կարմիր թելի նման՝ «Մշակի» այդ խոշոր, գրական և հասարակական դերը, որը մինչև այժմ էլ հանգիստ չէ տալիս ժամանակակից Փափազեաններին:

Ի հարկէ, այդ ամենը, ինչ որ ասացի վերևում, բոլորը չէ, լրիւ չէ, բայց բաւականանանք այսքանով և եզրափակենք ասելիքներս:

Գրքի առաջին մասը, այսինքն հին շրջանը, ուր իսկապէս որ խօսվում է գրականութեան պատմութեան մասին և որի վերաբերմամբ պատրաստի շատ նիւթեր գոյութիւն ունեն, մենք համարել ենք տանելի: Ի հարկէ, նոյն տեսակ էլ կը վերաբերվէինք երկրորդ մասին, եթէ նրա մէջ ձեռնհաս ու շիտակ գործ լինէր, եթէ նա քմահաճօրէն մէկին գեներալութեան աստիճան չը տար, միւսին իր ունեցած աստիճաններից չը զրկէր, մի խօսքով ազատ լինէր զուտ փափազեանական բուրմունքից:

Այդտեղ նա պէտք է բաւականաչափ ձեռնհաս լինէր ինքնուրոյն աշխատութեան համար, ունենար քննադատական ընդունակութիւն՝ նիւթերը դասաւորելու, ճիշդ պարզաբանելու և գլխաւոր հոսանքները ընդգծելու համար:

Դժբաղդաբար Փափազեանը գործ ունենալով իր ժամանակակիցների հետ, տեսնելով իր շուրջը խնամի-անձանց, իսկ դէմը հակառակորդների կամ հակակրելիների՝ սկսել է մէկին խնկարկել, կռիկսեններ անել, իսկ դէպի միւսները քարեր նետել:

Այդպիսի պայմաններում, այդօրինակ տրամադրութեամբ նա չէր կարող սառնասիրտ մնալ, անաչառ լինել և ճշմարտութիւնը ուղեցոյց ընդունել:

Եւ ահա խայտառակվել է: «Գրականութիւն հայոց պատմութեան» հեղինակը չէ կարողացել ըմբռնել իր ստանձնած գործի լրջութիւնն ու պատասխանատուութիւնը, ձեռնարկել է իր ոյժերից վեր մի գործի և խայտառակվել:

Այդ կատարված խայտառակ խողութեան տակ էլ միացել է Փափազեանը իր կազմած անաջող դասագրքով:

Ահա իմ պատասխանը:

Լ. Դանիէլեան

---

*) Տես «Մշակ» № 219.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

◆ Միութեան Մուշի Նպաստաբաշխ Յանձնախումբը, որուն նախագահն է առաջնորդ Ներսէս եպիսկոպոս Խարախանեան, նամակ մը ուղղելով Միութեան Կեդ. Վարչ. Ժողովին, կիմացնէ, թէ ասկէ առաջ ղրկուած 250 անգլ. ոսկիով եզ գնած և Մուշի ու Սասունի դաշտերուն ամենակարօտ հողագործ համայնքներուն է բաժնած: Նոյնպէս Տալւորիկի երկաթագործ համայնքին համար ղրկուած 70 անգլ. ոսկիով իրենց արհեստին վերաբերեալ գործիքներ բաժնած է:

Միութիւնը անցեալ շաբթու ևս Մուշ ղրկած է 200 անգլ. ոսկի, Զքուր-Աւազաղբիւրի համայնքին հողերը անմիջապէս ազատելու նպատակաւ:

◆ Կը լսենք թէ Միութիւնը ստիպողաբար շրջաբերական մը ղրկած է իր բոլոր մասնաճիւղներուն, հրաւիրելով զանոնք յետնեալ վճարքները Կեդրոն փութացնելու, որպէսզի կարելի ըլլայ ընդհուպ դրական օգնութիւն մը հասցնել Սասունի շրջանակին կարօտեալներուն: Միութիւնը այս իմաստով ընդհանուր կոչ մը պիտի հրատարակէ եղեր, կարևոր ֆոնդ մը գոյացնելով, Սասունի և այլ հողագործ համայնքներուն տնտեսական խեղճ վիճակը արմատական միջոցներով բարելաւելու գովելի առաջադրութեամբ:

◆ Միութիւնը վերջերս հետևեալ գումարները նաև ղրկած է.

Բէսապի հայ-աւետարանական վարժարանին՝ 20 անգլ. ոսկի, Գարասուբանի (Հալէ) ազգ. վարժարանին՝ 15 անգլ. ոսկի, Բէսապի աղջկանց վարժարանին (որուն շէնքն ու հողը Միութեան սեփականութիւնն են, վերջինը նուիրուած՝ Պօղոս քահանայ Աթիկեանէ)՝ 40 անգլիական ոսկի, Միացեալ Ընկերութեան՝ Միութեան գիւղային վարժարաններուն մատակարարութեան համար՝ 150 անգլ. ոսկի, Միացեալ Ընկերութեան՝ վարժապետանոցին աշխատանոցի գործիքներուն և այլ պիտոյքներու համար 180 անգ. ոսկի:

◆ Կանադայի Բերլին քաղաքի ազգայիններէն բնիկ զէյթունցի Կարապետ Տէր-Յակոբեան նամակ մը ուղղելով Հ. Բ. Ը. Միութեան՝ առաջարկած է ծննդավայրին մէջ 1895 թուին քանդուած Զանղարայի այգիները վերահաստատել և անոնց ոռոգումը ապահովել, ինչ որ 1,000 ոսկի ծախք կենթադրէ, խոստանալով ատոր 200 ոսկին ինք տրամադրել:

Միութեան Կեդր. Ժողովը, տեղւոյն վրայ քննութիւն մը ձեռնարկելով, պատասխանած է, թէ ըլլալիք գործողութիւնը յուսացուած արդիւնքը չի կրնար տալ, և թէ շատ աւելի նպատակայարմար է այդ կողմերը արհեստագործութիւնը մշակել, ինչ որ արդէն Կեդր. Ժողովին ուսումնասիրութեանց առարկան է: Յուսալի է, որ բարեսէր զէյթունցին այս նպատակին յատկացնէ իր նպաստը:

◆ Վերջերս մասնաճիւղներ կազմուած են Բուքրէշի և Քէօսթէնչէի մէջ նախագահութեամբ փաստաբան Արմենակ Մէօթէմէտեանի, Բալչըքի մէջ նախագահութեամբ վեր. Յակոբ Շահվելեանի, Վառնայի մէջ նախագահութեամբ Օհան քահանայ Մանգալուեանի, Բաղդադի մէջ նախագահութեամբ Գառնիկ Գույումճեանի, Դաւիթ Թագէոսեանի և Յակոբ Սահիտանեանի, Ակշէհիրի մէջ նախագահութեամբ տէր Յովսէփ Շարլեանի, Մարաշի մէջ նախագահութեամբ Ղևոնդ քահանայ Նահապետեանի, Քիլիսի մէջ նախագահութեամբ Միութեան համակիր բարեսէր ազգայիններու, Լոս-Անջէլօսի, Ֆաուլըրի, Թուլարայի, Եդէմի և Սան-Ֆրանչիսկոյի մէջ նախագահութեամբ Մուշեղ եպ. Սերովբեանի:

Այսպիսով Միութեան մասնաճիւղներուն թիւը կը հասնի 82-ի:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Berliner Tageblatt»-ի ասելով, եւրոպական բոլոր պետութիւնները ողջունելու են չինական հանրապետութիւնը:

◆ Չինական յեղափոխութեանը մեծ թափով մասնակցում են նաև կանայք:

◆ Պետերբուրգում երկար խորհրդակցեցին գաղտնի կերպով չինական դեսպանը և արտաքին գործերի մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ Ներատովը:

◆ Խոլերան սոսկալի չափով տարածվում է Տրիպոլիսում: Ամեն օր հիւանդանում են տասնեակ մարդիկ:

◆ Լուրերի համաձայն թիւրքերը Ձմիւռնիայում գրաւել են 62 իտալական նաւ:

◆ Մօդենում բացվեց իտալական սօցիալիստների կօնգրէսը:

◆ Վատիկանը յատուկ հրովարտակներով ազգաբնակութեանը յորդորում է աղօթել իտալացիների զէնքի աջողութեան համար:

◆ Լուրերի համաձայն Վիլհէլմ կայսրը նոյեմբերին այցելելու է Մադրիդ:

◆ Բերլինում մի դեռատի կին բժիշկներից տեղեկանալով՝ որ իր ամուսինը մեռնելու է, չափազանց սիրուց դրդված ինքը անձնասպան եղաւ, չուզելով հաշտվել իր սիրածի կորստեան մտքի հետ:

◆ Թիւրքաց մինիստրների խորհրդի հրաժարականից յետոյ, սուլթանը հրամայեց անմիջապէս իր մօտ կանչել Քեամիլ փաշային: Սակայն Քեամիլի ունեցած թշնամի երիտասարդ-թիւրքերը սուլթանի կարգադրութիւնը ի կատար ածելուն արգելք եղան: Եւ սուլթանը վերջ ի վերջոյ ստիպված եղաւ անսալ երիտասարդ-թիւրքերին և պաշտօնի կոչել Սայիդ փաշային:

◆ Լ. Տօլստոյի «Կենդանի դիակ» պիէսը մինչև օրս որտեղ ներկայացվել է՝ անցել է սառը և տպաւորութիւն չէ գործել:

◆ Ներքին գործերի մինիստրի օգնական Կուրլովը Կիեվի հանդէսների ժամանակ իր անձնական տրամադրութեան տակ ունէր 150,000 րուբլի, որպիսի գումարից նրա մօտ մնացորդ առաջացել է ընդամենը 45,000 րուբլի:

◆ Սենատոր Տրուսէվիչի նախագահութեամբ, արդարադատութեան և ներքին գործերի մինիստրները որոշել են դատարանին յանձնել յայտնի Ազէֆին, սակայն նրա որտեղ գտնվելը ոչ ոք չը գիտէ, նոյնիսկ կինը ահա 2½ տարի է ոչ մի տեղեկութիւն չունի նրա մասին: Ազէֆը դեռ կենդանի է. ասում են, որ նա ծպտեալ ապրում է Ամերիկայում:

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը բոլոր բանտերին, բանտարկեալների տներին պատուիրագրեց օր առաջ ուղարկել պահնորդական բաժանմունքի օրդէրով բանտարկվածների լիակատար ցուցակը: Այդ տեղեկութիւնները պահանջել է մինիստրների խորհրդի նախագահ Կոկօվցէվը:

◆ Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համաձայն Օդեսսայի գեներալ-նահանգապետ Տօլմաչէվի հրաժարականը արդէն կատարված փաստ է:

◆ Իտալիայում հիւանդացել է լուրջ կերպով վիպասան Մակսիմ Գօրկին:

◆ Օդեսսայում աջակողմեանները մեծ եռանդով սկսել են պատրաստութիւններ տեսնել 4-րդ Պետական Դումայի ընտրութիւնների համար:

◆ Րոստովում Դ/վ. անդամահատութիւնից յետոյ մեռաւ ճան. հաղ. մինիստրի 16 տարեկան աղջիկը: Հայրը իր դստեր դիակը յատուկ գնացքով բերեց Պետերբուրգ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

6 հոկտեմբերի

ԲԵՐԼԻՆ: Փակվեց հիւրանոցատէրերի կօնգրէսը: Հետևեալը կայանալու է Պարիզում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրութիւնը մատակարարական օգնութեան համար յատկացրեց Տուրգայի, Տօբոլի և Օրէնբուրգի նահանգներում մի միլիօն, Կազանի նահանգական զէմստվօյին մի միլիօն, Ակմոլինի շրջանին՝ կէս միլիօն րուբլի:

Սենատը անհետևանք թողեց գրողներ Պեշէխոնովի և Մեակոտինի վճռաբեկ բողոքագրերը, որոնց Պետ. դատ. պալատը դատապարտել է մի տարով բանտարկութեան «Պէտք է արդեօք գնալ Դումա» գրքոյկի համար:

Գրաւվեց «Гроза» լրագրի հոկտ. 4-ի համարը: Խմբագիր Պետրովը ենթարկվում է պատասխանատուութեան 1034-րդ յօդուածով:

ԼՈՆԴՈՆ: Վախճանվեց «Ֆօյ և Մօրգան» ֆիրմայի գլխաւորը՝ Ֆօյը, որ ընդարձակ առևտրական յարաբերութիւններ ունէր Ռուսաստանի հետ:

ԽԱՐԲԻՆ: Երեք ռուսների դիակների անդամահատութիւնը երևան հանեց ժանտախտ: 15 մարդ չէզոքացված են: Չինական արևելեան երկաթուղու վրա հսկողութիւն է նշանակված Մանջուրիա կայարանում:

ՊԱՐԻԶ: Ֆրանս-ռուսական գրական պայմանագրի նախագիծը քննող մասնաժողովը աւարտեց իր աշխատանքները, համարեա լիակատար համաձայնութեան գալով:

ՄՕՍԿՎԱ: Ազնուականների ժողովարանում նահանգական և գաւառական պարագլուխների ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց իշխ. Տրուբեցկօյի յիշատակին:

Դատաստանական պալատի յատուկ ատեանում դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ դռնփակ սկսվեց անիշխանական-կօմմունիստների գործի քննութիւնը:

ԲԵՐԼԻՆ: «Ցէպպէլին» դիրիժաբլը 20 ժամ շարունակ թռիչք կատարելուց յետոյ իջաւ Բադէնօօսում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Обществ. Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ամառային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից

I Փօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 12½-ին գիշերը շրջանակի գծով.
Հինգշաբթի » 12½ » » »
Շաբաթ » 12½ » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 1 ցերեկը, շրջանակի գծով.
Շաբաթ » 12 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Չորեքշաբթի առաւ. ժամի 4-ին շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի-Բօլգարիայի, Մակեդոնիայի, Սերբիայի, Անատոլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները:

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ, Րիգա, Լիբաւա և Րէվէլ:

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելյամինովսկայա փողոց, № 18.

Հեռախօս № 11.

Ընդունվում են և ապահովագրվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով:

Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(Հ.) 0—19

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:

Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում:

Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.

Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.

(ա. օ.) 669. 100—39

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Թեմիս կառավարիչ Եփրեմ սրբազան եպիսկոպոսի առաջադրութեան համաձայն, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու մեծապատիւ ծխականները ամսիս 9-ին, առաւօտեան ժամը 11-ին, հրաւիրվում են յիշեալ նորակառոյց եկեղեցին ընտրելու երեք պատուիրակներ, որոնք նշանակված օրը ժողովվելով քաղաքիս առաջնորդարան, միւս եկեղեցիների պատուիրակների հետ ընտրելու են մի թեմական պատգամաւոր, մասնակցելու Էջմիածնում ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան:

Նոյն օրը նշանակված է և յիշեալ ծխական եկեղեցու երէցփոխի ընտրութիւն: Վերջինիս համար ժողովը կը համարվի երկրորդ՝ իսկ պատուիրակների ընտրութիւնը՝ առաջինը:

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու աւ.-երէց՝
Յովհաննէս աւագ ք. Մարտիրոսեան
978 1—1

ՓՈՒՌԸ

ՏԱԼԻՍ ԵՆ ՎԱՐՁՈՎ.

Միքայէլեան փող., № 165.
984. 1—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.